Փաստացի Նիկոլի գլխավորությամբ նրանք են Հայաստանում մայդանների կազմակերպման մարտիկները: Չէ՞ որ մենք մեկ անգամ արդեն չդիմացանք ու կորցրինք մեր Արցախը: Իսկ օրը ցերեկով տեղի ունեցած ցեղասպանությունից հետո այս մարդկանց ձայնը չլսեցինք: Ինչո՞ւ: Փող տվո՞ղ չկար: Իսկ հաջորդ մայդանի հետեւանքն ի՞նչ է լինելու:

Կարդացեք՝ էջ 5

Հասարակությունը պետք է հասկանա, որ շանտաժիստին չի կարելի կուլ գնալ: Աշխարհի երեսին չկա նման երեւույթ, որ մարդիկ գնան՝ ընտրեն սպառնացող իշխանություններին: Նիկոլ Փաշինյանը դասական հանցագործ է: Նա այնքան հանցանք է գործել հայության դեմ, որ սա նրա համար կյանքի ու մահվան հարց է, ոչ թե քաղաքական պայքար:

Կարդացեք՝ էջ 7

Առաջին անգամ չէ, որ տեսնում ենք, թե ինչպես է նա հարձակվում, թիրախավորում, ծաղրում, վիրավորում լրագրողներին, որոնք պետք է կարողանան պաշտպանել ուրիշների ոտնահարվող իրավունքները, կանգնում՝ համբերատար լսում են, թե ինչպես է պաշտոնյան փրփուրը բերանին, մատը տնկած, թլոշ-փլոշ աղաղակում, վիրավորում իրենց:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 63 (4198), 17 ապրիլ, ուրբաթ, 2026

www.hraparak.am



Չնայած արդարադատության նախարար, Սահմանադրական բարեփոխումների խորհրդի ղեկավար Սրբուհի Գալյանը հայտարարել է, որ նոր սահմանադրության տեքստը կհրապարակվի մինչեւ հունիսի 7-ի ընտրությունները, սակայն ՔՊ մեր աղբյուրները քիչ հավանական են համարում, որ ընտրություններից առաջ հանրության առաջ փռեն իրենց «կեղտոտ սպիտակեղենը»: Խնդիրը միայն Անկախության հռչակագրից ազատվելը չէ, որի մասին Փաշինյանը բաց հայտարարել է, այլ մի շարք անհավանական փոփոխություններ ու խմբագրումներ: Մեզ ասացին՝ Փաշինյանն իր «հագով» է Սահմանադրությունը «ձեւելու»: Երեկ նա որոշ բան գաղտնազերծեց՝ ԱԺ ամբիոնից ասաց, որ մեզ պետք է «վիրահատական ճանապարհով լուծել» արդարադատության հարցը, ՀՀ-ում, նրա խոսքով, պետք է լինի այնպիսի համակարգ, որը բխի ժողովրդից, իսկ դրա համար անհրաժեշտ է նոր սահմանադրություն: Այս հայտարարությունը մատնում է, որ նոր սահմանադրության մեջ այնպիսի դրույթներ են ներդնելու, որ արդարադատության համակարգն ուղիղ կառավարվի մեկ անձի կողմից, եւ եթե վերընտրվի, այդ մեկ անձն ինքն է լինելու: Բացի այդ, տեղեկություններ կան, որ եթե ՔՊ-ին հունիսի 7-ին չհաջողվի սահմանադրական մեծամասնություն վերցնել, բայց մի կերպ մնալ իշխանության, ապա սահմանադրական կարգավորումներն էլ կհամապատասխանեցնեն իրենց ստացած քվեների քանակին, որպեսզի կարողանան սահմանադրական օրենքներ ընդունել:

Ալեն Սիմոնյանը երեկ՝ Ոստիկանության օրվա առթիվ, ԱԺ նախագահի շնորհակալագրով է պարգեւատրել 2 ոստիկանի՝ «ծառայողական պարտականությունները գերազանց եւ բարձր պատասխանատվությամբ կատարելու համար»: Նրանցից մեկն իրականում բռնարար է: Խոսքը ոստիկանության փոխգնդապետ, քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի վարչության՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ Սենիկ Երանոսյանի մասին է: Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Երանոսյանը, որը 2023 թ. փետրվարի 9-ին մի խումբ ոստիկանների հետ բռնության էր ենթարկել փաստաբաններ Մարզպետ Ավագյանին եւ Էմանուել Անանյանին՝ նրանք հայհոյել եւ ծեծի էին ենթարկել փաստաբաններին: Մինչ քաղհասարակությունը պահանջում էր դադարեցնել նրանց պաշտոնավարումը, նա պաշտոնի առաջխաղացում է ունեցել: Մյուս պարգեւատրվողն էլ ոստիկանության գլխավոր վարչության Թումանյանի բաժնի հատկապես կարեւոր գործերով ավագ համայնքային ոստիկան Սերգեյ Կիրակոսյանն է:

8 տարի ու ոչ մի առաջընթաց

8 տարի կառավարես երկիրն ու չհասկանաս, որ դու ոչ միայն քեզ ընտրողների վարչապետն ես, այլ նաեւ քեզ չընտրողների, քեզնից զզվողների, քո հեռացումը երազողների, քեզ քննադատողների, քեզ ընդդիմացողների: Ծամածռվես ու ծաղրես ընդդիմադիրներին, քո անդաստիարակ թիմին քսի տաս ընդդիմության եւ ընդդիմախոսներիդ վրա: Տափակ հումորներ անես, անօրինական սպառնալիքներ հնչեցնես: Զերծ չմնաս հայ ազգի ազգային արժանապատվությունը վիրավորելուց, նրա սրբություններին ու նուրբ զգացումներին դիպչելուց: Ակնհայտորեն պաշտպանես մեր դարավոր թշնամիների վտանգավոր թեզերն ու խոցես հայի ինքնասիրությունը: Վախեցնես պատերազմով ու տարբեր արհավիրքներով, երբ արհավիրքն այս ժողովուրդն արդեն զգացել ու տեսել է՝ հանձինս 2018-ից հետո տեղի ունեցած դեպքերի, եւ լավ գիտի, թե ով է դրանք բերել իր գլխին: Փորձես սահմանափակել տարբեր քաղաքական ուժերի մասնակցությունն ընտրություններին, տեռորով ու ապօրինի քրեական գործերով վախեցնես մրցակիցներիդ: Ներշնչես, որ դու եւ քո օրապակաս թիմն «արդեն ընտրված եք», եւ ոչ մի ուժ չի կարող այս «սարանչայի» դեմն առնել: Փորձես համոզել, որ նախկին իշխանությունները ոչ մի շանս չունեն ընտրվելու՝ անտեսելով, որ ընտրողը դու չես, այլ՝ ՀՀ քաղաքացին, եւ ցանկացած նորմալ իշխանություն թողնում է, որ արդար ընտրություն լինի, ու հասարակությունը որոշի, թե ում է ուզում իշխանության գլխին տեսնել: 8 տարի շարունակ խոսես ազատ, արդար ընտրություններից, ընտրակեղծիքների էջը փակելուց եւ անգամ համայնքային ընտրություններում խանգարես, որ արդար ընտրություններ կայանան, ու քաղաքացու քվեն տեղ հասնի: Դրժես բոլոր նախկին խոստումներդ, խախտես նախկինում հնչեցրած բոլոր սկզբունքներդ՝ հանուն մի բանի, որ շարունակես իշխել ու երկիրը մինչեւ վերջ քանդել:

Վերջին օրերին ահազանգեր ենք ստանում քաղաքացիներից, որ հիվանդանոցներում եւ պոլիկլինիկաներում իրենց զգուշացնում են, թե առողջապահության պարտադիր ապահովագրության համակարգն այսուհետ կիրառվելու է համաֆինանսավորման սկզբունքով՝ ծախսերի 20 տոկոսը ֆինանսավորելու են բուժառուները, 80 տոկոսը՝ պետությունը: Առողջապահության համակարգում կասկածներ կան, որ սա նախընտրական քարոզչության մաս է կազմում եւ հունիսի 7-ից հետո դադարելու է գործել, քանի որ այն պահուստային ֆոնդի հաշվին է գործում, որը կսպառվի: Առողջապահության նախարարությունից հերքեցին համաֆինանսավորման եւ ծրագրի դադարեցման մասին լուրերը:

Ի՞ՆՉ է ԽՆԴՐԵԼ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ ՊՈՒՏԻՆԻՑ

Վերջին փոդքաստում Ռոբերտ Քոչարյանը հպանցիկ ասաց, որ հանդիպել է ՌԴ նախագահի հետ, սակայն չմանրամասնեց: Մեր տեղեկություններով՝ զրույցն ավելի շատ բողոքի եւ պատասխանատվությունն ուրիշների վրա բարդելու փորձ է եղել: Քոչարյանը ներկայացրել է, թե ինչ «անհավանական հաջողությունների» կարող էր հասնել, եթե իրեն չխփեին սերժականները, ու չհայտնվեր Սամվել Կարապետյանը: Ապա թվարկել է, թե իր կարծիքով ինչ սխալներ է թույլ տալիս նորաստեղծ «Ուժեղ Հայաստանը», որից ողջ ընդդիմությունն է տուժում, եւ ոչ մեկը չի հաղթելու, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստանը»: Վերջում էլ խնդրել է Վիկտոր Սողոմոնյանին նշանակել ՌԴ Հայերի միության նախագահ, որպես հիմնավորում շեշտելով, որ Արա Աբրահամյանը խիստ բացասաբար է տրամադրված Կարապետյանի նկատմամբ, հետեւաբար, ընտրություններին ոչ միայն չի աջակցի, այլեւ նույնիսկ կարող է խանգարել: Վստահեցրել է, որ Սողոմոնյանի միջոցով կանի ամեն հնարավորը, որ «Ուժեղ Հայաստանը» հնարավորինս շատ ձայներ հավաքի: Մեր տեղեկությունների համաձայն, ՌԴ նախագահը տեղում հանձնարարել է հատուկ ծառայություններին՝ սկսել Վիկտոր Սողոմոնյանի ստուգման գործընթացը, ակնարկելով, որ վերջնական որոշումը կախված է դրա արդյունքներից: Ըստ նույն աղբյուրի՝ Արա Աբրահամյանն այլեւս չի կարողանում գտնել որեւէ մեկին, որն իր համար կմիջնորդի Պուտինի մոտ, եւ գրեթե համակերպվել է Հայերի միությունը կորցնելու մտքի հետ: Սակայն, հաշվի առնելով, որ ՌԴ-ում նման գործընթացներն արագ չեն ընթանում, նա դեռ հույս ունի, որ մինչեւ ընտրություններն իրեն չեն դիպչի: Իսկ եթե ընտրություններից հետո Փաշինյանը հաղթի, իրավիճակն այնքան կփոխվի, որ իր գոյության մասին կմոռանան եւ ավելի լուրջ հարցեր կլուծեն, օրինակ՝ հայ գործարարների ունեցվածքը խլելու, Հայաստան-Ռուսաստան առեւտրաշրջանառությունը դադարեցնելու հարցերը:

Հակակոռուպցիոն կոմիտեն երեկ վաղ առավոտից բերման էր ենթարկել «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը հարող 15 անձի:

ԱՅԴ ԲՈԼՈՐ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐԾ ԵՆ ՔՐԵՈՐԵՆ ՊԱՏԺԵԼԻ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻՑ

Իշխանելով անմեղության կանխավարկածը, Հակակոռուպցիոն կոմիտեն հաղորդագրություն տարածեց՝ «Բացահայտվել են ընտրակաշառք տալու եւ ստանալու նոր դեպքեր. ձերբակալվել են մեկ տասնյակից ավելի անձինք» վերնագրով, որտեղ ասված է. «Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամների եւ նրանց հետ համագործակցող հասարակական կազմակերպությունում որպես աշխատակից գրանցված մի խումբ անձանց կողմից Արարատի մարզի Արտաշատ համայնքի մի շարք ընտրողների ընտրակաշառք է բաժանվել: Հանցավոր գործունեությունը քողարկելու եւ չբացահայտվելու նպատակով հանցավոր խմբի անդամները միմյանց հետ կապ են հաստատել ինտերնետ-հավելվածների միջոցով»: Մեր ուշադրությունը գրավեց այն, որ այս իշխանությունը ոչ մի բանի առաջ չի կանգնում եւ ամենաանթույլատրելի մեթոդներով ներխուժում է մարդկանց անձնական կյանք՝ գաղտնալսում ոչ միայն ուղիղ եւ բջջային հեռախոսակապի միջոցները, այլեւ ինտերնետ հավելվածները, հավանաբար՝ կապ հաստատելով Վոթսապ, Տելեգրամ, Վայբեր կապի օպերատորների հետ: Մինչդեռ իշխանությունն անթաքույց եւ հրապարակային ընտրակաշառք է բաժանում, Ընտրական օրենսգիրք խախտում՝ մնալով անպատիժ:

Թեմայի մասին զրուցել ենք փաստաբան **Միհրան Պողոսյանի** հետ:

- Արդեն քանի օր է՝ իշխանությունների հրահանգով մարդիկ են ձերբակալվում՝ ընդդիմության ներկայացուցիչներ: 2 ամսական երեխայի մորն էին ձերբակալել՝ իբր կաշառք տալու համար, սակայն նույն Նիկոլ Փաշինյանն իր քարոզարշավների ժամանակ մարդկանց աշխատավարձերի բարձրացում է խոստանում, բացահայտ հայտարարում է, որ քաղաքացիներին կաշակցի՝ տարբեր հարցերով, տվյալներ է վերցնում մարդկանցից, խոստանում է աշխատանքի տեղավորել: Դրանք ընտրակաշառք չե՞ն, փոխարենը ընդդիմության գործողությունները դիտարկում են որպես ընտրակաշառք:

- Ես չեմ հանդիպել որեւէ տեղ, որ ընդդիմադիրներն անեն այն, ինչ անում է Նիկոլ Փաշինյանը: Արդյո՞ք Նիկոլ Փաշինյանն իր ընտրարշավի ժամանակ ամեն բան անում է օրենքի սահմաններում: Արդյո՞ք նա չի խախտում բարեգործության արգելքը կամ ընտրակաշառքի տարրեր պարունակող հայտարարություններ չի անում: Մենք բացահայտ տեսնում ենք այս քայլերը Փաշինյանի կողմից, սակայն ընդդիմության կողմից ես անձամբ չեմ նկատել նման բան: Մարդիկ աշխատավարձ են ստացել, աշխատանքի դիմաց գումար են ստացել, ուստի այն որեւէ կերպ չի կարող համարվել քրեական հանցագործություն: Այս իշխանություններն ուզում են հանցագործության բացակայության պարագայում պախարակել եւ թիրախավորել կոնկրետ ուժին: Մանկահասակ երեխայի մորն են փորձում ներկայացնել որպես հանցագործ եւ դրան գումարած՝ ուզում են ցույց տալ, թե իբր այնքան մեծահոգի են, որ ընտրակաշառքի դեպք են բացահայտել, սակայն, հաշվի առնելով, որ կինն ունի մի քանի ամսական երեխա, ընդառաջում են նրան.... այս ամենը մի մեծ մանիպուլյացիայի մաս է հանդիսանում: Այն բոլոր ձայնագրությունները, որոնք հրապարակում են, զերծ են քրեորեն պատժելի հանցակազմերից: Եթե մարդն անմեղ է, եթե նա ոչինչ չի արել, ինչո՞ւ պետք է կալանավորվեր կամ ինչո՞ւ պետք է այժմ որոշակի սահմանափակումների տակ հայտնվի: Վստահաբար, այդ ձայնագրությունները հրապարակվում են կիսատ-պռատ, բայց անգամ այդ պարագայում, երբ հրապարակվում է իշխանությունների համար ամենաձեռնտու հատվածը՝ հանրության մոտ տպավորություն ստեղծելու համար, անգամ այդ դեպքում չկա հանցակազմի տարր այդ հրապարակումներում: Խնդրահարույց են բացառապես իշխանության գործողությունները: Խուզարկություններ են տեղի ունենում, ձերբակալություններ եւ այլն, այս գործողությունները կարող ենք դիտարկել Ընտրական օրենսգրքի խախտման համատեքստում: Իշխանությունները, ունենալով քրեահրավական համակարգի լծակները, բոլոր ընդդիմադիր ուժերին փորձում են փնովել եւ շեղել բուն ընտրական գործընթացներից: Կարող ենք արձանագրել, որ խոստումներ տալիս են բոլորը, սակայն իշխանությունների կողմից դա արվում է համատարած: Պետության պարտականության կատարումը՝ կենսաթոշակների ավելացումն այս փուլում, երբ պետական բյուջեում չի եղել նման բան սահմանված, կարող ենք դիտարկել մեծագույն ընտրակաշառք: Տաքսիների տուգանքների վերացումը, տոկոսների անհուսալի դասակարգումները եւ այլն, եւս կարող ենք դիտարկել ընտրակաշառքի տրամաբանության մեջ: Իշխանությունն ասում է, որ դա պետության պարտականությունն է, բայց, ներողություն, դա հո ընտրություններից առաջ չի՞ դարձել պետության պարտականությունը, այն պետության պարտականությունն է եղել միշտ: Ինչպե՞ս է ստացվում, որ ամեն բան արվում է ընտրություններից առաջ: Սրանք՝ բոլորը, ընտրակաշառքի տարրեր են պարունակում: Այն բոլոր գործողությունները, որոնք տեղի են ունենում վերջին օրերին, ես դիտարկում եմ իշխանության կողմից հրահրված պրոցեսի մի մաս:

- Նիկոլ Փաշինյանն արդեն քանի ամիս է՝ մարզեր է այցելում, նախընտրական քարոզարշավ է իրականացնում եւ պնդում է, որ օրենքը դա չի արգելում: Օրենքն ի՞նչ է նախատեսում:

- Իշխանությունների մեծ մանիպուլյացիայի մի մասնիկն է սա: Մարզերում քարոզարշավի ժամանակ հայտարարում են, որ ՔՊ ցուցակի համար փրայմերիզներ են իրականացնում, սակայն, չգիտես ինչու, դրանք ոչ թե կուսակցության ներսում են արվում, այլ՝ ամենուր: Մանիպուլյացիա են անում, օրենքը շրջանցում են: Օրենքը հստակ սահմանել է քարոզարշավի շրջան, որը սկսվում է մայիսի 8-ից: Սակայն ՔՊ-ն, ընտրական պրոցեսը չսկսած, խախտում է Ընտրական օրենսգիրքը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԱՎՏՈԲՈՒՍ ՆՍՏԵԼ ՈՒ ՎՃԱՐԵԼ

Հայաստան այցելող զբոսաշրջիկները չեն կարողանում օգտվել հանրային տրանսպորտից: Ինչպես հայտնի է, մեր հանրային տրանսպորտում տեղադրված սարքերը ոչ մի վճարային համակարգի միացված չեն, բացի Arca-ից: Տպավորություն է, որ միմիայն ֆիզիկական պլաստիկ քարտերն են աշխատում՝ Viza եւ Master, եւ միայն ներքին ցանցով: Սրանից հատկապես դժգոհ են այլազգիները՝ ռուսները, որոնք մեր երկիր այցելող զբոսաշրջիկների մեծամասնությունն են: Ռուսական քարտերը սվիֆտ համակարգին միացված չեն, եւ Հայաստանում դրանցով հնարավոր չէ վճարում կատարել: Իհարկե, կարելի է տոմսեր գնել, սակայն դա էլ Հայաստանում հնարավոր չէ, քանի որ ոչ կանգառներում, ոչ ավտոբուսներում կամ տրոլեյբուսներում տոմսեր գնել հնարավոր չէ: Երեւանի բնակիչ **Գոռ Մադոյանը**, որը հաճախ է օգտվում տրանսպորտից, ասում է, որ ոչ միայն օտարերկրյա բանկային քարտերը, այլեւ տեղական բանկերի քարտերը պիտանի չեն տրանսպորտում վճարելու համար: «Եթե NFC, Google pay, Apple pay-ով ես ուզում վճարել, էլի չի լինում: NFC սիստեմը, Google pay, apple pay ուղղակի անջատված են: Դրան էլ որ գումարես այն, որ քեշով հնարավոր չէ տրանսպորտի տոմս առնել, կարելի է վստահ ասել, որ ամեն ինչ արված է, որ մարդիկ չվճարեն, ու դա արդար կլինի, որովհետեւ սիստեմ դիզայն արված չէ՝ հաճախորդների հարմարավետության համար»,- ասում է նա:

«Երեւան քաղաքի տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման կենտրոն» ՓԲԸ տնօրեն **Սարգիս Մանուկյանին** խնդրեցինք պարզաբանել, թե, ի վերջո, ինչ անեն զբոսաշրջիկները, որոնք չունեն ո՛չ TelCell, ո՛չ հայկական բանկային քարտ, ո՛չ էլ գիտեն, թե որտեղ են բանկային քարտ վաճառում: «Երեւան քաղաքում ներդրված միասնական տոմսային համակարգն ունի 9 տեսակի տոմսային պրոդուկտներ, եւ դրանք տարբեր տեսակի օգտվողների համար են, սկսած մեկանգամյա ուղեւորությունից մինչեւ մեկ տարի անսահմանափակ ուղեւորություններ, կախված նրանից՝ հաճախ օգտվո՞ղ է, տուրիզ՞ստ է, թե՞ մեկանգամյա պատահական ուղեւոր, նա իրեն հարմար տոմսային պրոդուկտն է ընտրում»: Ինչո՞ւ ավտոբուսում, կանգառներում չկա տոմսային պրոդուկտ գնելու հնարավորություն: Ըստ Սարգիս Մանուկյանի՝ Երեւան քաղաքում 2 հազարից ավելի տոմս գնելու տեղեր կան, եւ կա ինտերնետ-միջավայր, որը, ըստ ՓԲԸ ղեկավարի, բավարար է: Բավարար է, բայց հարմար չէ՝ առարկում ենք նրան: Եթե մեր «բարեփոխված» տրանսպորտի համար օրինակ են ծառայել եվրոպական երկրները, ապա պետք է նկատել, որ այնտեղ ուղեւորը կարող է տոմս գնել անմիջապես ավտոբուսի մեջ կամ կանգառներում, ինչպես, օրինակ, Շվեյցարիայում: Իսկ Հայաստանում ներդրված է մի համակարգ, որը փաստացի խախտում է արտասահմանցիների՝ տրանսպորտից օգտվելու իրավունքը: Մարդը եկել է Իրանից, լեզու չգիտի, չգիտի, թե որտեղից է տոմսը գնելու, կամ՝ եկել է Գերմանիայից, որտեղ ավտոբուսի մեջ կարելի է տոմս ձեռք բերել: Նստում է տրանսպորտ ու չի կարողանում վճարել, TelCell չունի ու ծանոթ էլ չի դրան, ինչ անի:

Սարգիս Մանուկյանը պատասխանում է, որ շատ քաղաքներում հնարավոր չէ ավտոբուսում տոմս ձեռք բերել, եւ բոլորը գնում են դեպի դա: «Տոմսը պետք է նախապես ձեռք բերել: Կա տոմսային կրիչների երեք տարբերակ, որոնցից մեկն ադապտացված է Ձեր ասած տարբերակին, որ եթե ինչ-որ մարդ չի հասցրել տոմս ձեռք բերել, կարող է օգտագործել իր անհպում բանկային քարտը եւ հենց ավտոբուսում մարել իր տոմսը»: Բայց, օրինակ, ռուսները չեն կարողանա այդպես վճարել, ինչ անեն: «Ռուսները ոչ մի երկրում չեն կարող վճարել, բացի Ռուսաստանից, իհարկե: Նրանք կարող են բազմակի օգտագործման տրանսպորտային քարտ ձեռք բերել, հենց տեղում, ցանկացած TelCell տերմինալում դրա վրա տոմս, այսպես ասած, նստացնել եւ օգտվել դրանից»,- պատասխանում է Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման կենտրոնի տնօրենը: Իսկ եթե տվյալ ռուսը կամ իրանցին չի ցանկանում TelCell-ից օգտվել, օրինակ, չի վստահում այդ համակարգին, ապա կորած է:

Հարցը մտահոգում է տուրոպերատորներին, որոնք զբոսաշրջիկներ են ընդունում ու ճանապարհում: «Տուրիզմի միացյալ ֆեդերացիա» կազմակերպության ներկայացուցիչ **Սեդա Աղբալյանն** իր ՖԲ էջում գրում է. «Վերջերս բողոք ստացա ռուս զբոսաշրջիկից, որ չի կարողացել վճարել հանրային տրանսպորտում՝ ավտոբուսում եւ մետրոյում: Ինքս էլ փորձեցի ոչ հայկական Visa քարտով վճարում կատարել, բայց չստացվեց (չգիտեմ՝ տեխնիկական խնդիր էր, թե ընդհանուր սահմանափակում»:

«Ես՝ ինքս էլ, ռուսական տինկոֆ բանկի քարտով փորձել եմ, եւ չի ստացվել, նույնիսկ հայկական արքա քարտով է երբեմն խնդիր տալիս, մեկ աշխատում է, մեկ՝ չէ»: «Վերադարձել էի ԱՄՆ-ից, ու վճարումը խնդիր էր ինձ համար, քանի որ չունեի Հայաստանի բանկային քարտ: ԱՄՆ բանկային քարտերը բացարձակ չեն աշխատում տրանսպորտում՝ վճարման համար»:

«Պատկան մարմինները ծայրահեղ կարճ են մտածում: Օրինակ, Թբիլիսիում ամեն բան մտածել են, Apple Pay-ով է անգամ հնարավոր վճարել կոնկրետ մետրոյում: Վրացական բանկային համակարգն էլ է մերինից չափազանց առաջ: Հիմա վրացական լավագույն Bank of Georgia-ն «Ամերիաբանկը» գնել է, հուսանք՝ բարեփոխումները մեր երկիր էլ կհասնեն»,- մեկնաբանում են օգտատերերը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«Ուժեղ Հայաստան» դրամաշնորհային ծրագիր

Նիկոլ Փաշինյանի իշխանությանն անհանգստացնում է Սամվել Կարապետյանի եւ նրա ուժի անունը: Հապճեպ օրենսդրական փոփոխությամբ բացառեցին Սամվել Կարապետյանի անունն օգտագործելու փաստը: Հիմա էլ «Ուժեղ Հայաստան» անունով դրամաշնորհային ծրագիր են իրականացնում, երեւի նպատակ ունենալով նսեմացնել «ուժեղ Հայաստանի» գաղափարը, այն իջեցնելով դրամաշնորհային ծրագրի մակարդակի: Պաշտոնապես հայտարարվել է «Զարգացող համայնքներ-ուժեղ Հայաստան» դրամաշնորհային ծրագրի մեկնարկը: Հայտարարվել է, որ այն ուղղված է երկրի համաչափ եւ կայուն առաջընթացի ապահովմանը: Ծրագրի ռազմավարական ուղղություններն են. գյուղատնտեսության արդիականացում՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրման միջոցով, էկոլոգիական կայունություն եւ բնապահպանական նախաձեռնությունների խթանում, գյուղական տուրիզմի զարգացում: Ծրագրով տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը մինչեւ 40 միլիոն դրամ է, ծրագիրն իրականացվում է 3 փուլով՝ գաղափարի նախնական գնահատում, դասընթաց եւ բիզնես նախագծի ներկայացում: Ծրագիրը չունի մեկ վերջնաժամկետ՝ հայտերը դիտարկվում են փուլ առ փուլ, ամբողջ ծրագրի գործողության ընթացքում՝ մինչեւ 2030 թ.:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԵԶ ՃՆՇՈՒՄ

Իշխանությունը մեծացնում է ճնշումը Սամվել Կարապետյանի գլխավորած «Ուժեղ Հայաստանի» դեմ:

Վերջին օրերին «Ընտրակաշառք, բարեգործությունների դրույթի խախտում» մեղադրանքների անվան տակ հետապնդումների են ենթարկվում կուսակցության տասնյակ անդամներ, գրասենյակների աշխատողներ: Նախօրեին երկու կանայք էին ձերբակալվել, երեկ էլ Արտաշատի կառույցի ներկայացուցիչներն էին Հակակոռուպցիոն կոմիտե բերման ենթարկվել: Նկատենք, որ առաջ Նիկոլ Փաշինյանը հիմնովին օգտագործում էր Քննչական կոմիտեն՝ իր հակառակորդների դեմ գործեր հարուցելու համար, հիմա այդ գործին է լծվել Հակակոռուպցիոն կոմիտեն: Եկել է այս կառույցների ղեկավարների՝ պաշտոնների համար «վճարելու» ժամը: Բերման ենթարկվածների փաստաբաններին նախ թույլ չէին տալիս տեսակցել իրենց պաշտպանյալների հետ եւ միայն ՄԻՊ միջամտությունից հետո թույլ տվեցին: Նրանք, ծանոթանալով մեղադրանքներին, պարզաբանեցին, որ խոսքը ոչ թե ընտրակաշառքի, այլ աշխատողների աշխատավարձերին է վերաբերում, որն իշխանությունները, ի դեմս իրավապահների, փորձում են որպես ընտրակաշառք ներկայացնել: Այս թեմայով փորձեցինք մեկնաբանություններ ստանալ իշխանության ներկայացուցիչներից: Մեր հարցերին պատասխանեց ՔՊ-ական պատգամավոր **Մարինա Ղազարյանը**:

- Տիկին Ղազարյան, մի քանի օր է՝ բռնել-բռնոցի է սկսվել ընդդիմադիրների շարքերում: Իշխանության թիրախում հատկապես Սամվել Կարապետյանի կուսակիցներն են, որոնց մեղսագրվող հանցանքները չեն հիմնավորվում: Այնպիսի տպավորություն է, որ վստահ չեք ձեր ուժերի, ձեր հաղթանակի վրա ու փորձում եք մրցակիցներին ճնշելու, պայքարից դուրս մղելու միջոցով վերարտադրվել, մինչդեռ բարձրագոչ հայտարարություններ էիք անում, թե 65 տոկոս սահմանադրական մեծամասնության եք հավակնում:

- Մենք ոչ անվստահ ենք, ոչ թույլ, ոչ էլ վախեցած, հավատացեք՝ մենք շատ ուժեղ ենք ու 50 պլյուս ենք հավաքելու, եւ դեռ կարող եմ ասել՝ ավելի շատ ենք հավաքելու, ու որեւէ մեկն էլ վախեցած չէ: Իրենք թող օրենքները չխախտեն: Խախտում են, ուրեմն պետք է պատասխանատվություն կրեն: Թե չէ, մենք ումից պիտի վախենանք:

- Ո՞ր օրենքներն են խախտում, պարզաբանել են, որ ոչ թե ընտրակաշառք են բաժանում, այլ խոսքն աշխատավարձերի մասին է, որ իրենց ՀԿ-ի աշխատակիցները ստանում են: Ինչ վերաբերում է խախտումներին, դուք այդ հարցում ռեկորդակիր եք, երկու օր է՝ ընդդիմադիրներն ԱԺ ամբիոնից թվարկում են, որ հանգստյան օրերին իրականացված ձեր քարոզարշավների ժամանակ վարչական ահռելի ռեսուրս եք վատնում, ՊՊԾ-ն, ոստիկանական գվարդիան են ձեզ ուղեկցում եւ այլն:

- Իրենք դա պետք է ապացուցեն, շատ սխալ բաներ են ասում:

- Այսինքն՝ չե՞ն ուղեկցում ուժային կառույցների տասնյակ աշխատողներ, մնացած բաների մասին էլ դեռ չենք խոսում:

- Ես չգիտեմ՝ մեզ ով է ուղեկցում, բայց ես գիտեմ, որ մենք գնում ենք մեր պարտքը կատարելու համար: Ու ես կրկնում եմ՝ մենք շատ վստահ ենք մեր ուժերին...

- Վստահ եք, բայց նախկինում սահմանադրական մեծամասնության մասին էիք խոսում, հիմա ասում եք՝ 50+1:

- Մենք 70 ենք հավաքելու, որովհետեւ ժողովուրդը տեսնում է՝ մենք ինչ ենք արել, ժողովուրդը մեր կողքին է կանգնած, դրա համար եմ վստահ ասում, որ մենք շատ բարձր տոկոսներ ենք հավաքելու... Հիմա եթե մանկահասակ երեխայի մայրն օրենք է խախտել, ի՞նչ անեինք՝ չպատժեի՞նք: Այո, բաց թողեցին, բարի կամք դրսեւորեցին, բայց խախտել է, չէ՞: Ու բավական է ասեք, թե ընդդիմության նկատմամբ ճնշումներ կան, այդ իրենք են մեզ ճնշում, օրինակ՝ ինձ:

- Այդ ինչպե՞ս:

- Հիբրիդային պատերազմով, ստերով: Ես «ինձ» ասելով՝ նկատի ունեմ «Քաղաքացիական պայմանագրին», ոչ թե ինձ անձնապես: Մեր մասին ստեր են տարածում եւ այլն, եւ այլն:

- Բայց ձեզ չեն հասնի, դուք եք ասում, որ մենք չընտրվենք՝ սա կլինի, դա չանցավ, հիմա իրավապահները հանգիստ չեն թողնում ընդդիմադիրներին: Չե՞ք վախենում, որ մրցակիցների նկատմամբ ճնշումները հակառակ էֆեկտ կարող են ունենալ:



- Մեր ժողովուրդն այնքան իմաստուն է, ինքը գիտի՝ ինչ որոշում է կայացնելու, ու ես ցավը տանեմ մեր ժողովրդի:

- Ի դեպ, Դուք ՔՊ ցուցակի անցողիկ հորիզոնականում չեք, 100-ից ներքեւ եք, գիտե՞ք՝ Ձեզ ինչ ճակատագիր է սպասվում:

- Դե, ժամանակը կգա՝ կիմանաք:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԷԼ ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԷԻՆ ԱՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Եվրոպամետ, սորոսական կոչվող եւ այլ գրանտակեր կազմակերպություններ ու անձինք չափազանց ակտիվացել են վերջին շրջանում: Նրանք առաջ էլ լրատվական մի տաղավարից մյուսն էին վազում՝ շարունակ հարցազրույց տալիս, պաշտպանում գործող իշխանություններին: Հիմա վագքը կրկնապատկվել է, դրան գումարվել են տարբեր համաժողովներն ու քննարկումները, էլեկտրոնային հասցեներով ուղարկվող մեկնաբանություններն ու պարզաբանումները: Օրինակ, Մեդիակենտրոնն ամեն օր մի բանախոսի մեկնաբանություն է ուղարկում՝ Գայանե Աբրահամյանի մեկնաբանությունը՝ հիբրիդային սպառնալիքների մասին, Դանիել Իոաննիսյանի մեկնաբանությունը՝ ընտրակաշառքի թեմայով, Թաթուլ Հակոբյանի մեկնաբանությունը՝ ռուս դիտորդների ժամանելու եւ հայոց եկեղեցու հետ առճակատման մասին, մոլդովացի փորձագետի մեկնաբանությունը՝ Օրբանի չընտրվելու հետ կապված, Աղասի Թադեւոսյանի մեկնաբանությունը՝ Պուտինի հռետորաբանության հետ կապված, Սերգեյ Մինասյանի մեկնաբանությունը՝ Փաշինյանի հայտարարության մասին, Աննա Դավթյան-Գեւորգյանի մեկնաբանությունը՝ Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի կողմից կիրառվող տնտեսական լծակների մասին: Մի խոսքով, ուղեղների լվացման ինտենսիվ գործընթաց՝ Եվրոպայի աչալուրջ հայացքի ներքո:

Կիրակի օրն էլ այս քարոզիչների խումբը քննարկումներ է անցկացնելու՝ Առաջին երեւանյան համաժողով անվան տակ: Մասնակիցները նույն դեմքերն են՝ Գայանե Աբրահամյան, Էդգար Վարդանյան, Ստյոպա Սաֆարյան, Ստեփան Գրիգորյան, Հովսեփ Խուրշուդյան, Դանիել Իոաննիսյան, Արեգ Քոչինյան, արձակագիր Հայկ Հովյան: Քննարկումների հիմնական թեման «հիբրիդային պատերազմն» է: Թեեւ հասկանալի չէ, թե գրող Հայկ Հովյանն ինչ կապ ունի այդ թեմայի հետ: Փաստորեն, գրողներն արդեն քաղաքական քարոզչությամբ են սկսել զբաղվել:

Ռեժիսոր **Հովհաննես Իշխանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով թեմայի մասին, նկատում է. «Նախ ուզում եմ պատմել, թե ինչ տեղի ունեցավ երեկ, հենց նույն այս քննարկման բանախոսներից մեկի՝ Գայանե Աբրահամյանի եւ իմ միջեւ: Գ. Աբրահամյանը եւ Հասմիկ Համբարձումյանը Մեդիա կենտրոնում ասուլիս էին տալիս եւ, տեսնելով ինձ, ուղղակի փախան, չէ՝ թռան, որպեսզի իմ հարցերից խուսափեն: 50 րոպե սպասեցի, որ ասուլիսից հետո նրանց հարցեր տամ, սակայն նրանք ուղղակի թռան, որպեսզի ես իրենց հարցեր չտամ: Ես նրանց ժողովրդավարական անվտանգությանը վերաբերող մի շարք հարցեր ունեի, մասնավորապես, թե ինչ են իրենք պատրաստվում անել, որպեսզի ՔՊ կուսակցությանն արգելեն մասնակցել, քանի որ ՔՊ-ն խոստացել է ընտրվելուն պես խախտել Սահմանադրության 17-րդ հոդվածը, Եվրոպական կոնվենցիայի մարդու իրավունքների 9-րդ հոդվածը, ինչպես նաեւ՝ խղճի ազատության 17-րդ հոդվածը: Այժմ թռածներով որոշել են նոր պանելային քննարկում կազմակերպել: Երբ սրանք իշխանության եկան, մի պահ արգելում էին մարդկանց ասուլիսներով հանդես գալ, օրինակ՝ Ռոբերտ Քոչարյանին արգելեցին, այժմ հասել են այն կետին, որ իրենք են թռնում ասուլիսներից: Գայանե Աբրահամյանը ողջ ասուլիսի ընթացքում ստեր էր տարածում, որ Ադրբեջանից որեւէ վտանգ չկա, որ ամեն բան դավադրությունների տեսության շարքից է եւ այլն: Սուրբ Հակոբ եկեղեցին քիչ առաջ են ավերել, ահագին հայկական եկեղեցիներ են ավերում, քանդակները ոչնչացնում են: Այս մարդիկ ոնց Արցախն են հանձնել, նույն մեթոդաբանությամբ հանձնում են Հայաստանը: Այն ժամանակ ասում էինք՝ Արցախը հանձնելու են, մեզ ասում էին՝ դավադրությունների տեսություն եք տարածում, ընդ որում՝ 2018-ից սկսած, ասել ենք, որ այս մարդը եկել է իշխանության, որ Արցախը վերջնականապես հանձնի, բայց մեզ անդադար այս նույն շրջանակները պնդում էին, որ դավադրության տեսությունների շարքից են մեր հայտարարությունները: Այժմ էլ հանձնում են Հայաստանը: Սրանք լրիվ Ադրբեջանի անվտանգությունն ապահովողներն են... դրանք՝ բոլորը.... գործ ունենք ժամանակակից հակահայ ռեինկարնացիաների հետ: Այս պանելային քննարկումը եւս այդ շարքին է դասվում, նպատակը շատ պարզ է՝ Հայաստանն ուզում են հանձնել Ադրբեջանին: Այն ժամանակ էլ պանելային քննարկումներ էին անում Արցախի մասին, հիմա՝ Հայաստանի մասին, սակայն այս անգամ նրանց մոտ ոչինչ չի ստացվելու: Մենք անպայման մեր անվտանգությունն այս անգամ կարողանալու ենք ապահովել, որպեսզի սրանք գնալով մեր տարածքները չփոքրացնեն: Այս անգամ դա նրանց թույլ չենք տալու»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՅԱՆԿԱՑԱԾ ՍՅԵՆԱՐԻ, ՔԱՆԻ ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ՝ ԲՈԼՈՐԻՍ ԵՐԿԻՐՆ Է

*«Հրապարակի» զրուցակիցն «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ **Արթուր Միքայելյանն** է:*

- Ապրիլի 8-ին կայացավ «Ուժեղ Հայաստան»-ի համագումարը, 12-ին՝ հանրահավաքը: Թեկնածուների ցանկն արդեն հրապարակվել է, ասվել է, որ վարչապետի թեկնածուն Սամվել Կարապետյանն է, չնայած սահմանադրական արգելքներին: Նա վերջին 4 տարին ՀՀ-ում մշտապես չի բնակվել, երկքաղաքացի է: Իշխանությունն էլ հապճեպ փոփոխություններ արեց ԸՕ-ում, ջղաձիգ «արշավ» է սկսել, ինչպե՞ս եք դրա դեմ պայքարելու:

- Սամվել Կարապետյանը լինելու է վարչապետ, եւ բոլոր տեխնիկական հարցերը մի քանի օրում լուծվելու են: Այն, ինչին մենք այսօր ականատես ենք, ցավոք, իրավական գործընթացների քաղաքականացում է: Ոչ մի իրավական երկրում ընտրություններից կարճ ժամանակ առաջ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ չեն կատարվում: Այդ մասին կա նաեւ Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքը: Իշխանությունների նպատակն է՝ ստեղծել արհեստական խոչընդոտներ, որը հարված է հասցնում ոչ միայն առանձին թեկնածուի, այլեւ ամբողջ ընտրական համակարգի վստահելիությանը: ՀՀ վարչապետը դեռ 2018-ին հայտարարել էր, որ չի պատրաստվում իր համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար փոխել ԸՕ-ն, բայց, ցավոք, այս անգամ եւս ականատես եղանք պարզ ճշմարտության, որ նա սեփական աթոռը պահելու համար պատրաստ է ամեն ինչի, խոստումները դրժելուց մինչեւ թշնամի երկրի օրակարգով աշխատել: Մեր քայլերը լինելու են հստակ: Ոչ մի օրենսդրական փոփոխություն չի կարող կանգնեցնել ժողովրդի կամքը եւ նրա կամարտահայտման իրավունքը: Գործելով բացառապես օրենսդրական դաշտում՝ մենք շարունակելու ենք պայքարը՝ ուժեղ Հայաստան կերտելու համար, եւ մեզ դա վստահաբար հաջողվելու է, քանի որ այն ոչ թե՝ ինչպես հիմա թշնամու օրակարգը սպասարկելու, այլ հայի ու Հայաստանի պատիվն ու արժանապատվությունը, տնտեսական զարգացումը, անվտանգությունը, մեր ինքնիշխանությունը պահելու մասին է: Վստահ ենք, որ չնայած իշխանության ջղաձգումներին ունենալու ենք բացարձակ հաղթանակ, եւ փոփոխություններ են լինելու Սամվել Կարապետյանի հետ:

- Փաշինյանը վախենում է, ուստի թիրախավորում է «Ուժեղ Հայաստանին» եւ նրա առաջնորդին՝ նրա լուսանկարների հետ էին «կռվում», հետո ընտրացուցակում նրա անվան առկայության դեմ կատաղի պայքար մղեցին:

- Քաղաքական գործընթացը պետք է կառուցված լինի ծրագրերի, գաղափարների եւ, որ ամենակարեւորն է՝ վստահության վրա: Փաշինյանն առաջնորդվում է բացառապես վախերով, ու դա թույլ մարդուն բնորոշ հատկանիշ է: «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանն իր կյանքով ապացուցել է իր՝ մեծանուն հայ, բարերար, գործարար լինելը, որը չի կարող դուր գալ մի իշխանության, որը սպասարկում է թշնամի երկրի օրակարգը: Նիկոլ Փաշինյանը վաղուց իրավունք չունի հայ ժողովրդի անունից խոսելու, ժողովուրդն ուզում է ուժեղ առաջնորդ, որ իր անցած ճանապարհով, իր միջազգային կապերով, հմտություններով ու կարողություններով Հայաստանին կբերի ուժեղ անվտանգություն, ուժեղ տնտեսություն եւ, որ ամենակարեւորն է՝ ուժեղ դիվանագիտության շնորհիվ երաշխավորված խաղաղություն: Մեր դիրքորոշումը հստակ է՝ հաշվի առնելով ներկա աշխարհաքաղաքական վիճակը, Հայաստանին անհրաժեշտ են փոփոխություններ: Ինչքան էլ նրանք կռիվ տան Սամվել Կարապետյանի նկարների հետ, ինչքան էլ հաշտ չլինեն ժողովրդի կամքի հետ, պետք է համակերպվեն այն մտքին, որ Հայաստանը հունիսի 8-ից ունենալու է նոր իշխանություն, եւ ՀՀ հաջորդ վարչապետի անունն է Սամվել Կարապետյան:

- Ապրիլի 12-ի հանրահավաքի ելույթում Կարապետյանը հայտարարեց, որ Հայաստանին արժանապատիվ փոփոխություններ են պետք, եւ ազգն ու պետությունը խայտառակող փոքրիկ խմբակը պետք է հեռացվի: Պատրա՞ստ եք վճռական պայքարի, եթե նույնիսկ պարտվեք ընտրություններում:

- Այն փոփոխությունները, որոնք բերելու է «Ուժեղ Հայաստանը», լինելու են տեսանելի եւ շոշափելի յուրաքանչյուր քաղաքացու համար՝ անվտանգություն, տնտեսություն, արդարություն, միասնություն, կյանքի մակարդակի իրական բարձրացում, որին սպասում է յուրաքանչյուր հայ մարդ: Նախ՝ մենք գնում ենք բացարձակ հաղթանակի, եթե-ներ չկան: Երկրորդ. ցանկացած սցենարի պատրաստ ենք, քանի որ Հայաստանը մեր՝ բոլորիս երկիրն է, եւ այն առավել, քան երբեւէ, ունի մեր օգնության կարիքը: Մենք երկիրը պետք է դուրս բերենք այս աղետալի վիճակից, եւ դա կարող է անել Սամվել Կարապետյանը: Նա է բերելու ժողովրդին այդքան ցանկալի փոփոխությունները: Նա վերականգնելու է ժողովրդավարությունը, պաշտպանելու է մարդու իրավունքները, էապես բարելավելու է ՀՀ քաղաքացու կյանքը:

- Հայաստանի սոցիալ-տնտեսական վատ վիճակի, գործազրկության, աղքատության, արտագաղթի դեմ ձեր քաղաքական թիմն ինչպե՞ս է պայքարելու, ձեր նախընտրական ծրագրերը բավականին հավակնոտ են:

- Այո, ունենք շատ հստակ անվտանգային ու տնտեսական ծրագիր: Սամվել Կարապետյանի տնտեսական 5 քայլերը լավացնելու են ժողովրդի կյանքը: 1-ին. 300 հազար նոր աշխատատեղերի ստեղծում, ընդ որում՝ շեշտը դրել ենք մարզերի վրա: Գիտե՞ք, որ մեր երկրում գործազրկության իրական մակարդակը բարձր է պաշտոնական տվյալներից. մոտ 500 հազար մարդ չունի արժանապատիվ աշխատանք, եւ դա հանգեցնում է աղքատության, որը հաղթահարվում է աշխատատեղերի ստեղծման միջոցով: Մենք առաջարկում ենք այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը, մի կողմից, ուղղված կլինի ներմուծման կրճատմանը, մյուս կողմից՝ արտահանման ծավալների ավելացմանը: Ստեղծելու ենք ձուլարաններ, գործարաններ, մթերման կայաններ եւ այլն: 2-րդ. 0% հարկ ենք սահմանելու փոքր բիզնեսի համար: Այն ձեռնարկությունների, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 100 մլն դրամը: Դրանք են՝ վարսավիրանոցները, սրահները, կոսմետոլոգիական եւ գեղեցկության կենտրոնները, հացի փռերը, փոքր խանութները, ավտոսպասարկման փոքր կետերը եւ այլն: 3-րդ. 20% էժան դեղորայք բոլորի համար: ՀՀ-ում դեղերի բարձր գները ծանր ազդեցություն ունեն հատկապես թոշակառուների եւ քրոնիկ հիվանդություններով անձանց վրա, նրանց եկամուտները սահմանափակ են, իսկ դեղերի կարիքը՝ շարունակական: Մենք առաջարկում ենք մեր երկրում դեղերի գների նվազեցման ամենաարագ եւ արդյունավետ լուծումը՝ արտաքին ռեֆերենսային գնագոյացումը՝ մաքսիմում թույլատրելի գնի մեխանիզմով, բայց հարմարեցված ՀՀ շուկային: Ընտրելու ենք TOP-100 առաջնահերթ դեղերի ցանկը եւ քննարկումներ ենք սկսելու դեղատնային բիզնեսների եւ ոլորտային դերակատարների հետ: 4-րդ. բերքի երաշխավորված մթերում գյուղերում, որի արդյունքում ակնկալում ենք մոտ 80 աշխատատեղի ստեղծում՝ յուրաքանչյուր ներգրավված շրջանում, բերքի կորուստների նվազում՝ առնվազն 25%-ով, որակի աճ եւ վաճառքի գնի բարձրացում, արտահանման աճ, արտադրության ինքնարժեքի նվազում, ցանքի ֆինանսավորման հասանելիության աճ, գյուղմթերքի գների կայուն մակարդակ, անվտանգ արտադրանքի ապահովում՝ որակի շնորհիվ: 5-րդ. 20 հազար մատչելի բնակարան՝ պետական աջակցությամբ. պետությունը կառուցապատողներին տրամադրում է հողատարածքներ արդեն պատրաստ ենթակառուցվածքներով (ճանապարհ, հոսանք, ջուր, գազ, կոյուղի), կառուցապատողի վրա մնում է միայն շենքերի կառուցումը, ինչը կտրուկ նվազեցնում է ինքնարժեքը: Սահմանվում է բնակարանների գների վերին շեմ՝ բացառելով սպեկուլյատիվ գնաճը: Ունենք նաեւ անվտանգային 6 խոստում: Մեր ժողովուրդը տեսնելու է ուժեղ դիվանագիտության ուժը, տեսնելու է ուժեղ բանակ, որոնք բերելու են ուժեղ խաղաղություն: Հայաստանն ունենալու է պաշտպանված երկինք, խելացի սահման, հայ զինվորը, սպան՝ արժանապատիվ ծառայություն: Մենք ստեղծելու ենք տեղական ռազմարդյունաբերություն: Փոփոխությունները գալիս են, մենք ունենալու ենք ուժեղ Հայաստան:

Արա ԱԼՈՅԱՆ

ՎԱԳՈՆ-ՏՆԱԿՈՒՄ՝ ՀԱԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Դիլիջանցի ակտիվիստ Լուսինե Գրիգորյանը «Հանուն ձեր ապագայի» բարեգործական ՀԿ-ի համահիմնադիր Սուսաննա Իսահակյանի ու Արկադի Կիրակոսյանի նկարած եւ համացանցում տեղադրած տեսանյութում տեսել, ճանաչել է իր ծանոթ ընտանիքը՝ Արփինե Այվազյանին ու նրա երեխաներին: Այդ ընտանիքը 2025թ. գարնանը Դիլիջանի ֆերմաներից մեկում անասնապահ է աշխատել, սեփականատերը կարիքավոր ընտանիքին է հատկացրել վագոն-տնակ: Գրիգորյանը, տեսնելով ընտանիքի վատ վիճակը, որ 3 տարեկան տղան՝ Ալենը, անխնամ է, խոսելու խնդիրներ ունի, երեխային տարել է վարսավիրի, հետո բժշկի մոտ՝ բուժզննման, հոգացել, որ մանկապարտեզում ազատ տեղ բացվելու դեպքում ընդունեն: Նաեւ՝ Ֆեյսբուքում արած հայտարարությամբ կարիքավոր ընտանիքին անհրաժեշտ մանկական սայլակի, լվացքի մեքենայի, հագուստի խնդիր է լուծել: Արփինե Այվազյանն ու ամուսինը՝ 36-ամյա Դավիթը, պարտքով գումար են խնդրել անասնապահական տնտեսության սեփականատիրոջից, որ հետո աշխատավարձով պարտքը մարեն, սակայն մի օր էլ, առանց զգուշացնելու, հավաքել են իրերն ու ամուսնու հնամաշ «Ժիգուլիով» հեռացել անհայտ ուղղությամբ: «Հանուն ձեր ապագայի» ՀԿ-ի հիմնադիրներ Արկադի Կիրակոսյանը եւ Սուսաննա Իսահակյանը շարունակել են համացանցում տեսանյութեր տեղադրել Ախուրյանի Կաղնուտ գյուղում, մեկ այլ անասնատիրոջ տրամադրած վագոն-տնակում ապրող, անասնապահությամբ զբաղվող ընտանիքի մասին ու կոչ են արել՝ գումարով օգնել ընտանիքին: Տեսանյութում ընտանիքի հայրը՝ Դավիթն ասում է, որ 36 տարեկան է, ունի շաքարախտ, ճողվածքներ, ստամոքսի խոց: 3 երեխաներից փոքրը՝ 3 ամսական աղջնակը, վատառողջ է, երեխայի համար կաթի փոշի գնելու գումար չունեն: Տիկտոկեր Տարոն Սարգսյանն էլ տեսանյութ է հրապարակել, թե ինչպես է այցելել վագոն-տնակում ապրող ընտանիքին՝ սնունդ ու գումար տվել, ապա ճանապարհի եզրին գտնվող մատուռում մոմ վառել: Տեսանյութում Տարոնը վագոն-տնակում ասում է, որ չի ուզում նկարել երեխաներին:

Սուսաննա Իսահակյանն ինձ հայտնեց, որ Ախուրյանի սոցիալական ծառայության աշխատակիցները, մասնագիտական հանձնաժողովն այցելել են Կաղնուտում գտնվող ընտանիքին: Պարզվել է, որ 31-ամյա Արփինե Այվազյանի անունն անձնագրով Արմինե է: Իսկ Արկադի Կիրակոսյանն ասաց, որ երեխայի լավագույն շահի տեսանկյունից որոշվել է, որ ընտանիքը տեղափոխվի Լոռու մարզի Վահագնի գյուղ՝ Արփինե Այվազյանի հայրական տուն, այդ մասին Լոռու սոցծառայությունը տեղյակ է: Ամիսներ շարունակ ընտանիքը տեղափոխվել է բնակավայրից բնակավայր, գոյատեւել անմարդկային՝ ցրտի, կեղտի, հակասանիտարական պայմաններում: 4 տարեկան, 1 տարեկան 5 ամսական եւ 3 ամիսը չբոլորած մանուկների լավագույն շահի մասին սոցիալական ծառայությունը եւ համայնքների սոցաշխատողները չգիտեի՞ն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՍԻՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄԱՅԴԱՆԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ»

Տարիներ առաջ Հայաստանում գործող մի «գրանտակեր» հասարակական կազմակերպության նախագծով մեկնեցի Վրաստանի մայրաքաղաք: Մեկշաբաթյա սեմինար էր՝ ադրբեջանական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Մեր պատվիրակությունը մոտ տասը հոգուց էր բաղկացած, բայց ես, կարծեք, միակն էի, որն առաջին անգամ էր մասնակցում նման միջոցառման: Անկեղծ ասած՝ չէի պատկերացնում, թե ինչպես պիտի հանդիպեմ թշնամի ժողովրդի ներկայացուցիչների հետ:

Վերջապես տեղ հասանք: Հյուրանոցի մուտքի մոտ մեզ դիմավորեցին եվրոպական կազմակերպության ներկայացուցիչները՝ ծրագրի ֆինանսավորողները, կարճ շփումից հետո իմացանք, որ ադրբեջանցիներն արդեն ժամանել են, ու գնացինք սենյակներ: Պայմանավորվեցինք, որ երկու ժամ անց կհավաքվենք դահլիճում:

Հյուրանոցը Թբիլիսիի կենտրոնական՝ Ռուսթավելի փողոցի մոտակայքում էր՝ չորս աստղանի, հարմարավետ: Բոլոր ծախսերը հոգում էր կազմակերպիչ կողմը, եւս 100 եվրո գումար ամեն օր տրվում էր յուրաքանչյուրիս՝ մասնակցության համար: Մի խոսքով, հայկական եւ ադրբեջանական պատվիրակների համար ստեղծված էր «ապահով եվրոպացու» մի քանի օրվա կյանք, եւ մեզ մնում էր ընդամենը իրար հետ լեզու գտնել, ինչն էլ, կարծեք, արագ ստացվեց:

Օրերն արագ անցան: Երեւան վերադառնալու ճանապարհին երկար մտորումներից հետո որոշեցի, այնուամենայնիվ, այլեւս չմասնակցել նման ծրագրերի: Խնդիրը հաշտության, խաղաղության ու ժողովրդավարության գեղեցիկ խոսքերի տակ թաքնվածն էր: Մեզ համոզում էին Արցախի հարցում զիջել՝ առանց հստակ փոխհատուցման: Փոխարենը առաջարկվում էր անորոշ «հեռանկար»: Ինձ համար անընդունելի էր, բայց տեսա, որ խմբում կային մարդիկ, որոնք ամբողջովին ընդունել էին այդ օտար, արհեստական օրակարգը: Պատճառը պարզ էր՝ նրանք առատորեն օգտվում էին այդ ֆոնդերից:

Փաստորեն, տարիներ ի վեր մեր թիկունքում մի քանի «արեւմտամետ» կերպարների միջոցով հետեւողականորեն դավադրություն էր հյուսվում: Այդ ծախսված միլիոնավոր եվրոների ու դոլարների «արդյունքը» տեսանք նախ Վրաստանում՝ «Վարդերի հեղափոխության», Ռուսաստանի դեմ սադրիչ պատերազմի ու ծանր հետեւանքների մեջ, ապա Ուկրաինայում՝ մայդանների, կրկին ՌԴ-ի դեմ պատերազմի հրահրմամբ, որտեղ վճարում է հասարակ ժողովուրդը, ու, վերջապես, Հայաստանում՝ «թավշյա, ոչ բռնի հեղափոխությամբ», ու նորից պատերազմ, Արցախի ամբողջական եւ ողբերգական կորուստ, եւ այդ կորուստների շարքը դեռ չի ավարտվել:

Հիմա էլ մեր եվրոպացի ու ամերիկացի «բարեկամներն» այդ կազմակերպություններին շարունակում են բաժանել «քաղցր բլիթներ», որոնց պատասխանատուները սեփական բարօրության դիմաց, հետեւողականորեն գեներացնում են կեղծ օրակարգեր, որոնք որեւէ կապ չունեն Հայաստանի ազգային ու պետական շահերի հետ:

Այստեղ հոդվածս կիսատ թողեցի, դուրս եկա պատշգամբ՝ ծխելու: Երեւանյան արեւոտ օր էր: Հարեւանս՝ Գարիկը, իրենց պատշգամբում սուրճ էր խմում: Արտերկրից՝ հիմնականում Եվրոպայից, մեքենաներ ներկրող, միշտ կայտառ տրամադրությամբ հարեւանս, ինձ տեսնելով, ծանոթ զվարթությամբ ողջունեց: Իրար որպիսության մասին կարճ հարցուպատասխանից հետո հարցրի.

-Հարեւան ջան, էս որ մերոնք օր ու գիշեր Եվրոպա են վազում, օրենքներ են ընդունում, հավատո՞ւմ ես:

Գարիկը մի լավ ծիծաղեց.

- Լսի, մեր պադյեզդում 12 հարեւան ունենք, չորսն արդեն ուրիշ երկրի քաղաքացի են, երկուսն էլ ուզում են գնալ՝ հացի խնդիրը լուծելու համար: Առանց էն էլ ժողովուրդը կոմունալները մի կերպ է վճարում: Բա եթե ռուսը գազը թանկացնի, Նիկոլն է գալու տները տաքացնի՞, թե՞ պարտքերն է փակելու:

- Դե, ասում են՝ ցուրտ ձմեռներին պիտի դիմանանք…

- Ո՞վ, Տիգրան Խզմալյանը, Արամ Սարգսյանը, Դանիել Իոաննիսյանը, Արման Բաբաջանյանը, Ստյոպա Սաֆարյանը, Արթուր Սաքո՞ւնցը, էլ ո՞վ կա:

- Շատ են:

- Տեսնո՞ւմ ես: Բայց մի նորմալ մարդ չկա, հարցնի՝ հանուն ինչի՞: Ովքե՞ր են դրանք ընդհանրապես: Ինչ ասեմ, եղբայր, Նիկոլը բոլորին խաբեց, ինքը քիչ էր, իր նմանների համար էլ ճանապարհ բացեց: Երկիրը քանդում են:

Զրույցը կարող էր շատ ավելի թեժանալ, եթե չընդհատեի ու ներս չմտնեի: Նստեցի համակարգչի դիմաց ու մտածեցի՝ Գարիկը, որը տարիներ ի վեր չի հետաքրքրվել ո՛չ թաղապետով, ո՛չ ընտրություններով, հանկարծ գիտի Խզմալյանի, Սարգսյանի, Իոաննիսյանի, Բաբաջանյանի, Սաֆարյանի, Սաքունցի անունները:

Ինձ էլ սկսեց տանջել այդ հարցը: Լավ, ովքե՞ր են այս մարդիկ ու իրենց նմանները, որոնք արեւմտյան տարբեր ֆոնդերից հսկայական գումարներ են ստանում, իշխանությունից ունեն արտոնյալ դիրք ու թույլտվություն՝ որոշելու, թե պետական քաղաքականության մեջ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Փաստացի Նիկոլի գլխավորությամբ նրանք են Հայաստանում մայդանների կազմակերպման մարտիկները: Չէ՞ որ մենք մեկ անգամ արդեն չդիմացանք ու կորցրինք մեր Արցախը: Իսկ օրը ցերեկով տեղի ունեցած ցեղասպանությունից հետո այս մարդկանց ձայնը չլսեցինք: Ինչո՞ւ: Փող տվո՞ղ չկար:

Իսկ հաջորդ մայդանի հետեւանքն ի՞նչ է լինելու: Չեմ էլ ուզում անգամ պատկերացնել: Մեր վրացի հարեւանները մեզնից խելացի եղան՝ ազգակործան պատուհասին երկրորդ շանս չտվեցին: Իսկ մենք…

Չէ, մենք երրորդ անգամ սխալվելու իրավունք չունենք:

Գրիգոր ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՑՆՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Զրժույթի միջազգային հիմնադրամը՝ ԱՄՀ-ն, հրապարակել է վերջին 25 տարվա՝ 2000-2025թթ. աշխարհի բնակչության աճի եւ նվազման մասին տեղեկություններ: Ուսումնասիրությունը ներառում է 183 երկիր: Հայաստանն այդ ցուցակում 163-րդն է, այդ ընթացքում Հայաստանի բնակչությունը նվազել է 3,3 տոկոսով:

ԱՄՀ-ի հրապարակած տեղեկությունները մեզ համար մի քանի կարեւոր եզրակացությունների տեղիք են տալիս, բայց մինչ դրանց անդրադառնալը ներկայացնենք մի քանի կարեւոր տեղեկություն եւս: Աշխարհի բնակչության միջին աճն այդ ընթացքում կազմել է 46,6 տոկոս, ցանկում ներկայացված 159 երկրում բնակչությունն աճել է, եւ միայն 24 երկրում է տեղի ունեցել բնակչության թվաքանակի անկում: Բնակչության աճի ցուցանիշով առաջատարը Կատարն է, որի բնակչությունն աճել է գրեթե 4,5 անգամ՝423 տոկոսով, իսկ անկման բացարձակ ռեկորդակիրն Ուկրաինան է, որը վերջին 25 տարում կորցրել է բնակչության մեկ երրորդը՝ 32,5 տոկոսը: Բնակչության ամենամեծ աճն արձանագրել են աֆրիկյան մայրցամաքի եւ Պարսից ծոցի երկրները, իսկ կրճատում հիմնականում տեղի է ունեցել Արեւելյան Եվրոպայում: Մեզ հետաքրքիր կլինեն նաեւ մեր անմիջական հարեւանների մասին տեղեկությունները՝ մեզնից ավելի վատ վիճակում է Վրաստանը, որտեղ բնակչությունը կրճատվել է 10,3 տոկոսով, Ռուսաստանում բնակչությունը կրճատվել է 0,7 տոկոսով, իսկ Իրանում արձանագրվել է բնակչության 37,8 տոկոս աճ, Թուրքիայում աճել է 33,9 տոկոսով, Ադրբեջանում՝ 29,1 տոկոսով:

Ուսումնասիրության հեղինակներն ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, որ ամենամեծ անկումն Արեւելյան Եվրոպայում է՝ Ուկրաինայի գլխավորությամբ՝ -32.5%, որին հաջորդում են Արեւելյան Եվրոպայի եւ բալթյան մի խումբ երկրներ, այդ թվում՝ Բուլղարիան (-23.2%), Լատվիան (-21.6%), Լիտվան (-17.5%), Մոլդովան (-18.8%) եւ Ռումինիան (-16.1%): Ըստ ԱՄՀ-ի, նման անկման պատճառն այս երկրների անդամակցությունն է ԵՄ-ին, որը «բացեց արեւմտյան միգրացիայի ուղիներ Արեւելյան Եվրոպայի որոշ հատվածների համար՝ արագացնելով բնակչության երկարաժամկետ կորուստներն այն տարածաշրջանում, որն արդեն իսկ բախվում է ծերացող ժողովրդագրության եւ ցածր ծնելիության մակարդակի հետ»: Մեր հարեւան Վրաստանում արձանագրված 10 տոկոսը գերազանցող անկումը եւս պայմանավորված է նույն հանգամանքով՝ ԵՄ-ի հետ վիզաների ազատականացմամբ, որի արդյունքում երիտասարդ եւ աշխատունակ բնակչությունը գերադասում է ապրել եւ աշխատել ԵՄ տարածքում, որտեղ աշխատանքի պայմաններն ու վարձատրությունն անհամեմատ ավելի բարձր են, քան՝ Վրաստանում: Որեւէ կասկած չկա, որ եթե ԵՄ-ն վիզաների ազատականացման ռեժիմ մտցնի Հայաստանի հետ, նույն խնդրին բախվելու է Հայաստանը:

ԵՄ զարգացած տնտեսություն ունեցող երկրները, ընդհակառակը՝ Արեւելյան Եվրոպայի, Աֆրիկայի եւ արաբական երկրներից տեղի ունեցող միգրացիայի հաշվին կարողացել են ապահովել բնակչության աճ, ԵՄ-ի ամենամեծ տնտեսություն ունեցող Գերմանիայի բնակչությունն ավելացել է 2,7 տոկոսով, Ֆրանսիայինը՝ 13,4, Դանիայինը՝ 12,6, Ավստրիայինը՝ 14,6, Նիդերլանդներինը՝ 13,8, Բելգիայինը՝ 15,9 տոկոսով: Սրանք այն երկրներն են, որոնք կլանում են ԵՄ-ի հիմնական միգրացիոն հոսքերը:

Ուսումնասիրության հեղինակներն ուշադրություն են դարձնում, որ աշխարհի ամենամեծ տնտեսությունների շարքում բնակչության աճը, ընդհանուր առմամբ, ավելի չափավոր է եղել: Հնդկաստանում գրանցվել է 38.4% աճ, ԱՄՆ-ում՝ 21.0%, Չինաստանում՝ 10.9%, իսկ Բրազիլիայում՝ 22.1%: Կանադայում գրանցվել է ավելի ուժեղ՝ 35.6% աճ, իսկ Ավստրալիայում՝ 44.9% աճ: Զարգացած տնտեսություն ունեցող երկրներից անկում է գրանցվել միայն Ճապոնիայում՝ 2.8%-ով, եւ Հարավային Կորեայում՝ 9.9%: Սրա պատճառներից մեկն էլ այն է, որ այս երկրները փակ են միգրացիոն հոսքերի համար:

Միասին վերցրած՝ քարտեզը ցույց է տալիս, որ բնակչության ամենաարագ աճը պայմանավորված է ոչ թե ամենամեծ տնտեսություններով կամ տնտեսական զարգացման մակարդակով, այլ՝ միգրացիայով, որը տեղի է ունենում ավելի երիտասարդ եւ արագ զարգացող երկրների հաշվին:

Այս վիճակագրությունը մեզ բերում է մի շատ դառը եզրակացության. չնայած աշխարհի բնակչությունն անցած 25 տարիների ընթացքում միջինում աճել է 46 տոկոսով, սակայն Հայաստանը կորցրել է իր բնակչության 3,3 տոկոսը: Հայաստանի հարեւան երկրներում՝ Իրան, Թուրքիա, Ադրբեջան, բնակչությունը շատ արագ աճում է, բնակչության արագ աճը պահանջում է նոր կենսական տարածքներ եւ նոր ռեսուրսներ, դրա պակասը զարգացող եւ աճող երկրները լրացնում են իրենցից ավելի թույլ երկրների հաշվին: Հայաստանում ոչ միայն բնակչության աճի հետ կապված որեւէ ծրագիր չի իրականացվում, այլեւ՝ ընդհակառակը, վարվող քաղաքականությունը նպաստում է արտագաղթի ծավալների աճին: Եթե Հայաստանն իսկապես ստանա, հասնի ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման ռեժիմի ընդունման, որը փորձում են ներկայացնել որպես ձեռքբերում, երկիրը կկորցնի եւս 200-250 հազար բնակիչ՝ հիմնականում երիտասարդ եւ աշխատունակ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԲՈՒԺՈՒՄ

ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՎՃԱՐ Է ՄԻԱՅՆ ԹՂԹԻ ՎՐԱ

«Քաղցկեղը դատավճիռ չէ». ճիշտ ժամանակն է, որ այս կարգախոսն ամբողջովին իրականություն դառնա»,- Քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված հայկական ուռուցքաբանության երրորդ կոնգրեսի ժամանակ ներկաներին ողջունելով, ասել էր առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Նախարարը վստահեցրել էր՝ արվում է ամեն ինչ, որ քաղցկեղի կանխարգելման, վաղ հայտնաբերման ու բուժման գործում Հայաստանը հետ չմնա զարգացած եւ որեւէ երկրից:

2025 թվականի հոկտեմբերը կանանց կրծքագեղձի քաղցկեղի իրազեկման ամիս էր հայտարարվել, անգամ կառավարության անդամներն էին կրում կանխարգելումը խորհրդանշող վարդագույն ժապավեններ: Իշխանությունը ցուցադրաբար խոսում էր այն մասին, որ Հայաստանում քաղցկեղի բուժումն անվճար է: Մինչդեռ իրականությունն այլ բան է փաստում:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարիկ Աղաբեկյանն ահազանգում է, որ քաղցկեղով հիվանդների բուժումը Հայաստանում անվճար չէ, որքան էլ դա փորձում է ներկայացնել առողջապահության նախարարությունը. «Եթե արդեն ախտորոշում են քաղցկեղ, դրա բուժումը դարեր ի վեր եղել է պետպատվերի շրջանակներում: Ինձ հարազատ կին, որի ամուսինը 45 տարեկանում մահացել է, 3 զավակ ունի, մեծ տղան բանակում է ծառայում, որը եւս առավելություն է, որ կնոջ բուժումն անվճար պետք է լինի, բուժիմնարկն իրենից գումար չի ուզել, ասել է՝ պետպատվեր է, բայց դեղորայքը պետք է գնեք: Դեղը որ լիներ 1000 կամ 10 հազար դրամ, գուցե հիվանդը գներ, բայց 145 հազար դրամ արժե: Ենթադրենք՝ իմ հարազատը կարող է վճարել, դեղը գնում է, բայց մյուս հիվանդները, որ գումար չունեն, որտեղից առնեն: Բա ձեր պետպատվեր կոչվածն ինչի՞ համար է, ինչի՞ համար եք ասում պետպատվեր, եթե պետությունը չի կարողանում այդ դեղը տալ հիվանդին: Առաջին քիմիան ստացել է, անձամբ ես եմ դեղը գնել, երկրորդ քիմիան ստանալուց ինձ ասացին՝ մեզնից կախված չէ, պետությունը չի ֆինանսավորել: Կրկին գնեցի, բայց ասացի՝ երրորդ քիմիայի օրը դեղի հարցը լուծեք: Պետք է գնայինք երրորդ քիմիայի, բժիշկը զանգեց, ասաց, որ դեղի հարցը չլուծվեց, այս անգամ էլ դեղի պետպատվերը չի լինելու: Լավ, մինչեւ ե՞րբ, ինչի՞ են հայտարարում, որ անվճար է, միանգամից ասեք, որ քաղցկեղի բուժումը վճարովի է, եւ վերջ»:

«Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ Հայաստանում պահանջարկ ունեցող օնկոլոգիական դեղերի մեծ մասը գրանցված չէ. «Բժիշկները քաղաքացիներին հստակ տալիս են դեղի անունները, տալիս են դեղատների հասցեն, որտեղից պետք է առնել այդ դեղերը, եւ բավականին թանկ գներով առնում են այդ դեղերը: Ի՞նչ է ասում առողջապահության նախարարությունը, ասում է, որ դուք ապահովագրված լինեք, նախկինում 350 հազար էի կոմպենսացնում, հիմա 1 մլն 200 հազար ենք կոմպենսացնում: Բայց իրականում այն դեղերը, որոնք պետք են քաղցկեղի բուժման համար, շատ հաճախ ներառված չեն լինում, եւ հաճախ հիվանդներին դնում են խնդրի առաջ, որ իրենք դեղերը գնեն: Անգամ եթե այդ դեղերը գրանցված էլ են, այդ գումարի մեջ չի բավարարում դեղերի փոխհատուցումը կամ ընդհանրապես չի փոխհատուցվում: Հիվանդները դեղերը գնում են, էլ չասեմ, որ ճառագայթային ախտորոշման համար են վճարում, վճարում են բազմաթիվ այլ պրոցեդուրաների համար: Կոնսուլտացիաների համար էլ են վճարում: Եթե հիվանդի մոտ ուռուցքի ախտորոշում կա, ամբողջովին պետք է անվճար արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ցուցաբերեն, սակայն այդպես չէ»:

Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն **Կարեն Ծառուկյանը** հավանական է՝ չգիտեր, թե ինչ պատասխան տար մեր հարցերին, քանի որ շաբաթներով զանգահարում ենք ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրենին, ներկայացնում ենք հարցը, թե ինչու քաղցկեղով հիվանդների համար պետպատվերը չի գործում, ինչու է քաղցկեղով հիվանդը ստիպված դեղորայքն ինքը գնում: Հայաստանում քաղցկեղի թանկ արժեցող քիմիաթերապիայի, դեղորայքային բուժման բեռը հիվանդների վրա է: Հիվանդության որոշ էտապներում բուժումը հաճախ դրական արդյունք չի տալիս: Մարդիկ մի քանի տարի ավելի ապրելու համար ստիպված են լինում անգամ տուն, ավտոմեքենա վաճառել, որ քաղցկեղով հիվանդի բուժումը կազմակերպեն:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԸ «ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ» Է ԿԱՏԱՐՈՒՄ

Վրաստանն ակտիվանում է արտաքին քաղաքական ճակատում, մասնավորապես՝ Կենտրոնական Ասիայի ուղղությամբ: Վրաստանի ԱԳ նախարարությունը հայտարարել է, որ նախատեսվում են մի շարք այցեր այդ ռեգիոն: ԱԳ նախարար Մակա Բոճորիշվիլին ասել է, որ առաջիկայում վրացական պետական բարձրաստիճան պատվիրակություն է այցելելու Ղրղզստան եւ Տաջիկստան: Նկատենք, որ Կենտրոնական Ասիայի երկրները նախկինում, երբ Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրացիան որպես գործընթաց գտնվում էր իր լավագույն ժամանակներում, Կենտրոնական Ասիայի երկրները հաճախակի չէին հայտնվում Թբիլիսիի ուշադրության կենտրոնում, ինչպես նկատել է ռուս վերլուծաբան Սերգեյ Մարկեդոնովը:

Վերջին անգամ Վրաստանից վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին է մեկնել Ղրղզստան՝ 2023 թվականին, միջազգային ինչ-որ միջոցառման: Հիմա Ղարիբաշվիլին խաղից դուրս վիճակում է, քանի որ այս տարվա հունվարին 5 տարվա ազատազրկման է դատապարտվել: Այցը չի կարելի համարել պետական կամ պաշտոնական. ավելի ճիշտ՝ այն բազմակողմ ֆորմատ ուներ: Տաջիկստանի պարագայում իրավիճակը շատ ավելի «վատ» է: 1994 թ. օգոստոսի սկզբից դիվանագիտական հարաբերություններ հաստատած Տաջիկստանն ու Վրաստանը, կարելի է ասել, մեկմեկու հանդեպ հետաքրքրություն չեն ունեցել: Շփումներ, իհարկե, եղել են, բայց դրանք սահմանափակվել են միջկառավարական կոնտակտներով, որոնք, որպես կանոն, բարձր մակարդակի չեն եղել: Թբիլիսիում կարծես որոշել են ուղղել այդ «սխալը»: Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն փետրվարին այցելել է Ղազախստան, իսկ այս տարվա ապրիլին՝ Ղազախստանի ԱԳ նախարար Երմեկ Կոշերբեկովն այցելել է Թբիլիսի: Անցյալ տարվա մարտին վրաց վարչապետն այցելել է Տաշքենդ: Թուրքմենստանում Կոբախիձեն եղել է մի քանի անգամ՝ ներառյալ մի միջոցառման, որին մասնակցել է նաեւ ՌԴ նախագահը: Եվ, ուրեմն, ինչո՞վ բացատրել այն, որ Թբիլիսին ակտիվանում է Կենտրոնական Ասիայում: Եվրամիության եւ Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների սառնության ֆոնին՝ այս ակտիվացումը բացատրելի է: Թբիլիսին լավ է գնահատում Կենտրոնական Ասիայի՝ որպես ռեգիոն, ունեցած կարեւորագույն նշանակությունը եւ փորձում է այլընտրանքներ ստեղծել իր համար: Հատկապես որ Կենտրոնական Ասիայի երկրների հետ չկան այնպիսի խնդիրներ, որոնք համարվեն անհաղթահարելի: Մյուս կողմից՝ Վրաստանը ձգտում է պահպանել ռեգիոնալ տարանցիկ զարկերակի կարգավիճակը, եւ լիովին տրամաբանական է, որ Թբիլիսիի համար Կենտրոնական Ասիան առաջնահերթ կարեւորություն ունի, ինչպես որ կարեւոր են վրաց-ադրբեջանական հարաբերությունները: Կենտրոնական Ասիայից այն կողմ արդեն գլոբալ ուժային կենտրոն Չինաստանն է, ու դա էլ պետք չէ անտեսել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

RFDC-Ն ներկայացրել է քրիստոնյաների դեմ հարձակումների նոր զեկույցը

Religious Freedom Data Center-ը «Հրապարակին» է տրամադրել հունվարից մինչեւ մարտ ամիսների ընթացքում Իսրայելում քրիստոնյաների դեմ տեղի ունեցած հարձակումների մասին զեկույցը: Հիշեցնենք, որ այս ոչ պետական հասարակական կազմակերպությունն արդեն չորրորդ տարին է՝ Իսրայելում ոչ միայն մոնիթորինգ է իրականացնում, այլեւ համաժամանակյա աջակցություն է ցուցաբերում ատելության կամ անհանդուրժողականության զոհ դարձած քրիստոնյաներին: Զեկույցում նշվում է, որ ներկայացվել են նաեւ այն տհաճ միջադեպերը, որոնք ուղեկցվել են քրիստոնյաների՝ իրենց դավանած հավատքի հետեւանքով կրած հալածանքների, ուղիղ հարձակումների, վանդալիզմի դեպքերով եւ կրոնական անհանդուրժողականության այլ միջադեպերով ուղեկցված:

Եվ այսպես, 2026 թվականի հունվարից մինչեւ մարտ ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել 44 ոտնձգություն, որոնցից 22-ը դսեւորվել է քրիստոնյաների վրա թքելու ձեւով: Քրիստոնեական վանքերի կամ քրիստոնյաների բնակության վայրերի ցուցանակների վնասման վեց դեպք է արձանագրվել, վանդալիզմի՝ երկու, խոսքով վիրավորելու՝ երկու դեպք, ատելության խոսք պատկերող գրաֆիտիի մեկ դրվագ է հայտնաբերվել, հավատքը վարկաբեկելու, վիրավորելու եւ անհանդուրժողականության դեպքեր: Հետաքրքիր է, որ այդ միջադեպերից 26-ը գրանցվել է Երուսաղեմում, դեպքերի 58 տոկոսը՝ Հին քաղաքի հատվածում, 15 տոկոսը՝ Սիոն լեռան հատվածում, իսկ Արեւմտյան Երուսաղեմում՝ դեպքերի 23 տոկոսը, մնացյալ 4 տոկոսն էլ՝ Գեթսեմանե թաղամասում:

Ներկայացված է նաեւ Հին քաղաքի հատվածում գրանցված հանցագործությունների վիճակագրությունը, ըստ որի՝ 10 դեպք միայն գրանցվել է հայկական պատրիարքության ճանապարհի երկայնքով, Ջաֆֆայի հատվածում՝ 4 եւ Մուրիաստանում՝ մեկ դեպք: Այս բոլոր հանցագործություններն ապացուցող 11 տեսանյութ կա, որոնք նկարահանված են տեսախցիկներով, եւ այդ դեպքերի մասին վկայող 12 վկայով, ընդ որում՝ զոհի անձի գաղտնիությունն ամբողջությամբ ապահովվում է:

Հիշեցնենք, որ Religious Freedom Data Center-ը մշտական կապի մեջ է Իսրայելի ոստիկանության հետ, ու գրանցված դեպքերի մասով դիմել են նաեւ ոստիկանություն: Այս մշտադիտարկման, անհանդուրժողականության զոհ դարձած քրիստոնյաների դեմ տեղի ունեցած հանցագործությունների մասին բարձրաձայնելու, զոհերին իրավական եւ հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար կազմակերպությունը համագործակցում է Իսրայելի իրավապահ համակարգերի հետ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Մի խմբում ոչ թե 20, այլ 30 երեխա կլինի

Մեր տեղեկություններով, Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մի շարք մանկապարտեզների կրտսեր խմբերի (2-3 տարեկաններ-ի) երեխաների թվակազմն ավելացրել են: Եթե նախկինում երեխաների քանակը յուրաքանչյուր խմբում 20 էր, ապա այժմ մի շարք մանկապարտեզների խմբերում երեխաների քանակը հասցրել են 30-ի: Ընդ որում, գործող օրենքը չի փոխվել, եւ որեւէ նոր որոշում չի ընդունվել: Ըստ գործող օրենքի, կրտսեր առաջին խմբում երեխաների քանակը պետք է լինի առավելագույնը 20, իսկ կրտսեր երկրորդ խումբ փոխադրվելիս՝ սեպտեմբերին, խմբում սաների քանակն ավելանում է 10-ով, դառնում 30 երեխա:

Սա արվել է մանկապարտեզի համար սպասողների հերթերը նվազեցնելու եւ վերանորոգվող մանկապարտեզների սաներին տեղավորելու նպատակով, բայց պարզ է, որ 2-3 տարեկան 30 երեխա մեկ դաստիարակն ու դայակը չեն կարող խնամել: «Հրապարակ»-ի հետ զրույցում Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը հաստատեց մեր տեղեկությունը՝ նշելով, որ նման անհաժեշտություն առաջացել է հիմնանորոգվող մանկապարտեզներից երեխաներին տեղափոխելու ժամանակ. «Հիմնականում կրտսեր առաջին խմբերում երեխաների 3-4 տարեկանները լրացել են, խմբերը համալրած երեխաները, այսպես թե այնպես, պետք է սեպտեմբերին հաճախեին մանկապարտեզ, որեւէ մեկի իրավունքի հաշվին չեն տեղի ունեցել խմբերում համալրումները: Այդ երեխաները ոչ միայն հիմնանորոգման գնացող մանկապարտեզների երեխաներ են, նաեւ երեխաներ են, ովքեր հերթում սպասում էին եւ նոր են սկսել հաճախել»:

Հարցին՝ խմբերում երեխաների քանակի ավելացմանը զուգահեռ, դայակ-դաստիարակների թիվը ճիւս ավելացրել են, Խաչատրյանը պատասխանեց. «Իհարկե, անհրաժեշտություն առաջացել է, եւ հաստիքացուցակով առանձին դեպքերում ունեն, իսկ որոշ դեպքերում էլ առաջիկայում ունենալու են: Այդ հարցը եւս մտածված է, սակայն եթե այս պահին համալրված էլ չէ, անձնակազմի այլ ներկայացուցիչներ այդ դերը կատարում են, մինչեւ կհամալրվեն: Բոլոր մանկապարտեզներում չէ, որ համալրվել են կրտսեր առաջին խմբերը, կան, որ անձնակազմի, տարածքի խնդիրներ ունեն, կամ խմբում խնդրով բալիկներ կան, մենք ցուցաբերել ենք անհատական մոտեցում, որտեղ հնարավոր է եղել, ավելացրել ենք, հատկապես որ արդեն ձեւավորված խմբեր են, եւ կարծել ենք, որ մի քանի ամիս շուտ խնդիր չի լինի»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՄԱՆ ԴԵՊՔ ՉԻ ԵՂԵԼ, ՈՐ ՄԱՐԴԻԿ ԸՆՏՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

- Նախընտրական պրոցեսներն ավելի հստակ են դառնում, ներքաղաքական մթնոլորտն օրեցօր շիկանում է: Նախորդ շաբաթ օրը Սամվել Կարապետյանը հանդես եկավ ուղերձով, իսկ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը շարունակում են սպառնալ պատերազմով եւ խոստանալ խաղաղություն: Ի՞նչ սպասելիքներ ունեք Դուք քաղաքական ուժերից:

- Ցավով պետք է արձանագրենք, որ ընտրապայքարն ընթանում է Նիկոլի թելադրած օրակարգով: Նիկոլն այդ առումով պրոֆեսիոնալ է եւ կարողանում է ընտրապայքարն առաջ տանել շանտաժի լեզվով: Նա սպառնում է պատերազմով, բայց խնդիրը գիտե՞ք որն է. նորմալ հասարակություն ունենալու պարագայում որեւէ քաղաքական ուժ եթե իր ընտրողին սպառնար պատերազմով, հասարակությունը ոչ միայն կմերժեր այդ ուժին, այլեւ՝ կպատժեր: Մենք գործ ունենք դասական շանտաժիստի հետ: Մարդ, որը հասարակությանը վախեցնում է պատերազմով: Որպես հասարակության մի մասնիկ, ես հարց ունեմ պատերազմով սպառնացող իշխանությանը. եթե այսօր ինձ վախեցնում եք պատերազմով, ապա վաղը Ադրբեջանը Նիկոլի միջոցով պատերազմով կսպառնա, եթե փոփոխության չենթարկվի Սահմանադրությունը: Ընդամենը որոշ ժամանակ անց նույն Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, Ադրբեջանի պատվերով, նոր պատերազմի մասին է գուժելու, եթե 300-400 հազար ադրբեջանցի չվերաբնակեցվի Հայաստանում: Ու այդպես շարունակ: Մեր հասարակությունը պետք է հասկանա, որ շանտաժիստին չի կարելի կուլ գնալ: Աշխարհի երեսին չկա նման երեւույթ, որ մարդիկ գնան ու ընտրեն սպառնացող իշխանություններին: Նիկոլ Փաշինյանը դասական հանցագործ է: Նա այնքան հանցանք է գործել հայության դեմ, որ սա արդեն նրա համար կյանքի ու մահվան հարց է, այլ ոչ թե՝ քաղաքական պայքար: Նիկոլ անհողը դասական քաղաքական հանցագործ է: Օրինակ՝ Հունգարիայում Օրբանը մոտ 20 տարի իշխանավարելուց հետո իշխանությունը շատ հանգիստ հանձնեց ընդդիմությանը, Նիկոլը, ի տարբերություն Օրբանի, ատում է իր պետությունը, նա հակահայ դավաճան է եւ այդքան հեշտ, կարծում եմ, իշխանություն չի հանձնելու: Նա գիտակցում է, որ ամեն անգամ հասարակության մի մասին խաբելով, թե իբր ինքը խաղաղություն է բերել, իսկ Արցախը հանձնել են նախկին իշխանությունները, այդ ամենն իրականում բացահայտվելու է, եւ ինքը դրա համար պատասխան է տալու: Նա կենաց-մահու կռիվ է տալիս իշխանության համար, եթե նա իշխանություն չունեցավ, չի կարողանալու հանգիստ ապրել երկրագնդի ցանկացած մասում:

- Իսկ ի՞նչ անելիքներ ունի այս փուլում ընդդիմությունը:

- Նախ ուզում եմ շեշտել, որ նորմալ հասարակություն ունեցող երկրի քաղաքացին գուցե կուրախանար, որ իր երկրում թոշակներ են բարձրացվում, սակայն Նիկոլի արածը սոցիալական դեմագոգիա էր: Ես ինչքան էլ որ ուրախանամ թոշակների բարձրացմամբ, ինձ մոտ հարց է առաջանում. մարդ, որը 2025 թվականի դեկտեմբերին դոշ էր ծեծում, որ անգամ հազար դրամով հնարավոր չէ թոշակների բարձրացումը, քանի որ այն թանկ կարող է նստել պետության վրա, այժմ հարց է առաջանում, թե որտեղից այդ փողը ծլեց: Նիկոլին, հավանաբար, այդ փողը տվել են թուրքերն ու ադրբեջանցիները, որի համար Նիկոլը պետք է վճարի, սակայն ոչ թե սեփական գրպանից, այլ՝ հայ ժողովրդի եւ Հայաստանի հաշվին: Սոցիալական դեմագոգիայով հրճվող մասսան պետք է հաշվի, թե նույն ապրիլի 1-ից որքան են թանկացել առաջին անհրաժեշտության ապրանքների գները: Նիկոլը վերջերս մի մարդու ասաց՝ ապրիլի 1-ից կկարողանաք միս ուտել, բայց գիտե՞ք, թե նույն միսը որքան է թանկացել: Նիկոլ անհողն ասում է՝ այսքան տարի միս չեք կերել, հիմա կուտեք, բայց ինչպե՞ս, եթե միսը նույնպես ահագին թանկացել է: Մսի գինը եթե մինչեւ ապրիլի 1-ն արժեր, օրինակ, 4 հազար դրամ, այժմ արժե 5 հազար 500 դրամ: Մյուս սննդամթերքների մասին էլ չխոսենք: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա ես չեմ ցանկանա հիմա քննադատել նրանց, սակայն Նիկոլը նրանց բազմաթիվ սխալներից միայն շահում է: Իրենց ցուցակներից սկսած, վերջացրած քարոզարշավներով.... չեմ ուզում ասել ավելին: Չեմ ուզում Նիկոլի ջրաղացին ջուր լցնել, բայց հույս ունեմ, որ մեր հասարակությունը կհասկանա, որ շատ ընդդիմադիրներ ուղղակի ձայներ փոշիացնողներ են:

- Ասում են, որ Ռուսաստանը կարող է գազի սակագինն ավելացնել:

- Աժ փոխնախագահ ճղճղանն ասում է, որ վստահ է, որ ՌԴ-ն գազը չի թանկացնի: Գյումրիում մի լավ ասացվածք կա՝ էշի երեսին են ուղիղ խոսքն ասում: Եթե Վլադիմիր Պուտինի ակնարկները՝ գազի գնի հետ կապված, Նիկոլի համար մեսիջ չեն, ապա ես ի՞նչ ասեմ, միայն կարող եմ ասել, որ խղճում եմ իրենց:

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Գագիկ Համբարյանն** է:*

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉՈՒ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆԻ ՖԻԼՄԸ

Առաջին ալիքի յութուբյան ալիքում արդեն հասանելի է ռեժիսոր, գրող եւ հրապարակախոս Տիգրան Պասկեւիչյանի «Անկախության մեր ճանապարհը» վավերագրական ֆիլմը: Ինձ համար, որպես հայ մարդու, բավական հետաքրքիր էր ֆիլմը դիտելը: Զարմանալի կարող է թվալ, սակայն Հայոց պատմության հին դրվագներն ու հատկապես Արշակունյաց կամ Կիլիկյան շրջանները հաճախ ավելի լավ գիտենք, քան մոտ 4 տասնամյակ առաջ տեղի ունեցած իրադարձությունները, եւ շատ մանրամասներ, որոնք ներկայացված են ֆիլմում, ինձ համար բացահայտում էին:

Ֆիլմը չեմ գրաքննի, կկիսվեմ անհատ անձի տպավորություններով՝ սոսկ շարքային դիտողի տեսանկյունից, որին հետաքրքիր են հայ ժողովրդի պատմության բոլոր դրվագները: Նախ ասեմ, որ ֆիլմն ինձ դուր եկավ եւ ինչու.

• նախ որովհետեւ ֆիլմը՝ զուտ որպես մեր նորագույն պատմության վավերագրական փաստագրական ֆիլմ, բավական զուսպ է նկարահանված, առանց «ուռա-հայրենասիրական պաթոսի»:

• կա անալիզ, իրադարձությունների պատճառահետեւանքային կապերի հստակ մատնանշում:

• Հայաստանում եւ ԼՂ-ում ընթացող զարգացումները ներկայացված են համախորհրդային ընդհանուր պատմաքաղաքական զարգացումների համատեքստում, եւ դա հատկապես կարեւոր է ինձ համար:

Առհասարակ, ես այն կարծիքին եմ, որ պատմական իրադարձություններն ու զարգացումները պետք է դիտարկել գլոբալ համատեքստում՝ հասկանալու տրամաբանությունը, պատճառահետեւանքային կապերը, կարելիի, անխուսափելիի եւ դիպվածի նուրբ բաժանումները: Ես այն մարդկանցից եմ, ով դեմ է «ուռա հայրենասիրությանը» եւ կողմ է հստակ ու սառնասիրտ հաշվարկին, անալիտիկային, նույնիսկ սեփական ժողովրդի կյանքում կատարվողին փորձում է նայել «կողքից»՝ որպես տեսական նյութ, որը ենթակա է հետազոտման՝ ամբողջովին եւ լիարժեք անաչառության լույսի ներքո:

• Ինձ հետաքրքիր էր ֆիլմի ասելիքում տեղ գտած «մեսիջը»՝ ուղերձը. «Ժողովրդի կամքն անկոտրելի է, անխորտակելի է», «գյուղ կանգնի՝ գերան կկոտրի» եւ «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»: Սա հատկապես այսօրվա հայաստանյան իրականության պայմաններում խիստ կարեւոր է, որ դիտողը հասկանա, որովհետեւ սա հասկանալուց է կախված Սահմանադրության անփոփոխելի ու կարեւոր դրույթը՝ Հայաստանում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

• Խորհրդային Միության պատմության հատկապես վերջին շրջանի ուսումնասիրությունը եւ այս համատեքստում հայկական զարթոնքի պատմության ուսումնասիրությունն այս ֆիլմի միջոցով կրկին հուշում է, որ ցանկացած իշխանություն, նույնիսկ եթե եկել է հեղափոխական ճանապարհով, ինչպիսին կոմունիստական իշխանությունն էր, որն իշխանության եկավ 1917 թվականի իշխանազավթմամբ կամ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությամբ, ի վերջո, ինքն է սկսում վախենալ ժողովրդական զանգվածների հեղափոխական տրամադրություններից, քանի որ կտրվում է ժողովրդից, դառնում, այսպես ասած, «փակ ակումբ», լճանում եւ այդպիսով հայտարարում սեփական կործանման անխուսափելիության մասին: Սա, ի դեպ, պատմական անխուսափելի շրջապտույտ է, որը, անկախ երկրից ու ժողովրդից, փուլ առ փուլ՝ ոսկերչական ճշգրտությամբ լինում է՝ ուզենք կամ չուզենք:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵՐԺԵՆՔ ՏԿԱԾ ՅՈՒՅԱՄԱՏՆԵՐԻ ԵԵՊԱՁՐՈՒՅՑՆԵՐԸ

Ռանգիստ եղեք, խնդիր չկա տնտեսական դաշտում ռուսական կողմի հետ՝ վերջին ինքնավստահությամբ խոսում է Ռուբեն Ռուբինյանը: Նա, օրինակ, վստահ է, որ գազի գինը Ռուսաստանը չի բարձրացնի, վստահ տոնով, քան դա կասեր ինքը՝ Պուտինը, ասում է՝ գազը չի թանկանա: Ինչո՞ւ պետք է թանկանա, ագրեսիվ համառությամբ պնդում է նա, թեեւ հստակ Պուտինն ասել է, որ պետք է ընտել՝ ուզո՞ւմ են երկրի համար ապահովել էժան գազ, թե՞ ուզում են գնալ դեպի Եվրամիություն: Ռուբինյանը դրանում ակնարկ, սպառնալիք չի տեսել եւ չի տեսնում անհրաժեշտություն՝ պատասխանելու հարցերին, հատկապես այն լրագրողների կողմից, ովքեր հետաքրքրված են՝ հասկանալու Ռուսաստանի հետ աճող տարաձայնությունների հեռանկարը: Այստեղ մի պահ հիշենք, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի բացառում ռուսական կողմից սպառնալիքը եւ դրան պատասխանում է փոխադարձ սպառնալիքով՝ ասելով, թե այդ դեպքում Հայաստանը կլքի ՀԱՊԿ-ն ու ԵԱՏՄ-ն: Ուրեմն, այնուամենայնիվ, Պուտինն ակնարկել է, եւ դա ընկալել են ոչ միայն Ռուբինյանի համար անընդունելի լրատվամիջոցները:

Պարզվում է, որ մենք՝ լրագրողներս, իրավունք չունենք այս պաշտոնյային տալ իր համար անհարմար կամ տհաճ հարցեր, եւ այդ ամբարտավան ինքնավստահությունը նա արդարացնում է ժողովրդի քվեով: Պարզվում է նաեւ, որ ժողովուրդն ընտրել է այս երիտասարդին՝ անձամբ նրան ժողովուրդն ընտրել է ու տվել մանդատ՝ ճղճղալու եւ լրագրողների վրա մատ թափ տալու համար: Նա կարծում է՝ ժողովուրդը համաձայն է, որ պաշտոնյան սպառնա, թե պարզելու է լրատվամիջոցների ֆինանսավորման աղբյուրները եւ արգելելու է հարց տալ նրանց, ում աղբյուրն անձամբ իրեն դուր չի գա: Նա չի ընդունում, որ ընթերցողը եւս ֆինանսավորում է լրատվամիջոցը եւ նույն ընթերցողն ակնկալում է ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները, քանի որ առիթ է գտել ռուսական օլիգարխներին, նախկիններին, ուրիշներին, այլ մեղավորների եւ պատասխանատուների հիշատակելու համար:

«Թիրախավորել եմ լրագրողներին եւ թիրախավորելու եմ ապագայում». սպառնագին խոստանում է այս պաշտոնյան, որն իր գործունեությամբ ոչինչ չի ավելացրել հայ մարդու կյանքում, բացի աղետներից ու ցավից, ոչնչով հայտնի չէ, բացի իր թրքասիրությունից, եւ ընտրվել է ոչ թե իր հեղինակության կամ գիտելիքների, խոսքի-շնորհքի, ինչ-որ տաղանդի, հմտության կամ որեւէ այլ լավ բանի շնորհիվ, այլ՝ միայն որպես նիկոլփաշինյանական դասական ուսապարկ: Բայց կարեւորը դա չէ, այլ՝ այն, որ մենք՝ լրագրողներս, թույլ ենք տալիս մեզ հետ աշխատել այս ոճով: Առաջին անգամ չէ, որ տեսնում ենք, թե ինչպես է պաշտոնյան ԱԺ-ում հարձակվում, թիրախավորում, ծաղրում, վիրավորում, անգամ նվաստացնում մեր գործընկերներին: Լրագրողները, որ ենթադրաբար պետք է ելնեն մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից, կարողանան պաշտպանել ուրիշների ոտնահարվող իրավունքները, կանգնում՝ համբերատար լսում են, թե ինչպես է պաշտոնյան փրփուրը բերանին ու մատը տնկած, թլոշ- փլոշ աղաղակում, վիրավորում լրագրողին:

Հարգելի գործընկերներ, իսկ ի՞նչ ինֆորմացիա հաղորդեց մեզ տվյալ պաշտոնյան՝ ծաղրանքով պատասխանելով ձեր բոլոր հարցերին, ի՞նչ նորություն ասաց, ի՞նչ ավելացրեց ձեր լրահոսին, ի՞նչ տվեց ունկնդրին: Ոչինչ՝ 0 տեղեկատվություն, 0 նորություն, 0 հետաքրքրություն: Եթե պարզվեց, որ տվյալ պաշտոնյան դրսեւորում է իրեն ամբարտավան ոճով ու անհարգալից տոնայնությամբ, դա արդեն վաղուց հայտնի էր, նրա կերպարը բացահայտելու իմաստով՝ նույնպես նոր բան չկար: Այս ճեպազրույցներով մենք միայն նրանց հնարավորություն ենք տալիս՝ լրահոսում տարածել իրենց նախընտրական ակտիվությունը, ցուցադրել իրենց կարծիքներն ու ինքնավստահությունը, ինքնահաստատվել, երեւալ ղեկավարի աչքին, ում ուսապարկն են իրենք հանդիսանում, երեւալ ընտրողի աչքին, երեւալ «ուժեղ», «սրամիտ» ու «հաղթական»:

Ես հին լրագրող եմ, բայց ինձ համար բացարձակապես անընդունելի է այն ցուցամատը, որը թափահարելով խոսում է այս թոթովախոս պաշտոնյան՝ մեր գործընկեր, լրագրող, երջանկահիշատակ Գենոֆիայի որդին:

Մեզ՝ որպես լրատվամիջոց, այս հարցազրույցները գրեթե ոչինչ չեն տալիս, այս հարցազրույցներն առաջին հերթին իրենց են պետք, ոչ թե մեզ կամ մեր ընթերցողին: Եվ, ուրեմն, մեր գործընկերներին վիրավորող առանձնյակներին կարելի է արհամարհել, բոյկոտել, չտալ ոչ մի հարց, դրանով իսկ պատժել նրանց ընտրությունների նախաշեմին, ստիպել, որ հարգեն ցանկացած հարց՝ ցանկացած լրատվամիջոցից, հարգեն մեր ընթերցողին, որոնցից շատերը նրանց ընտրողը չեն: Բոյկոտելով անքաղաքավարի զրուցակիցներին՝ մենք կսովորեցնենք նրանց, որ քանի դեռ պաշտոնյա են, ստիպված են զուսպ լինել՝ իրենց անսահման անզսպության ու անդաստիարակության մեջ: Առնվազն հարցազրույցի պահին, երբ պաշտոնյան դրսեւորում է անհարիր կեցվածք, կարելի է կիսատ թողնել այդ կարեւոր զրույցը եւ դադարեցնել նրա գովազդը, թույլ չտալ, որ ամեն անգամ նրանք առաջինը հեռանան՝ մեզ իրենց արժանի զրուցակից չհամարելով, այն դեպքում, երբ իրենք արժանի չեն մեր հարցերին եւ ուշադրությանը:

Դժբախտաբար, մեր հանրությունն էլ չի կարողանում միավորվել մեկ գաղափարի շուրջ, նույնկերպ ընտրություններից առաջ ընդդիմությունը չկարողացավ վերադասավորվել ու միավորվել, շարունակեցին աշխատել անջատ ու տրոհված՝ իրենց էներգիան վատնելով նույն խրամատում հակառակորդներ փնտրելով: Այս պայմաններում երեւի գոնե լրագրողները պետք է կարողանան միավորվել, գոնե մեկ անգամ պետք է կարողանանք արհամարհել ու պատժել նրանց, ով մեզ ծաղրում է, չի հարգում: Եթե ծաղրում են մի լրագրողի, ուրեմն ծաղրում են մեզ՝ բոլորիս, ծաղրում են անարժանները, նրանք, ովքեր իրականում արժանի են ամենայն ծաղրի ու արգահատանքի:

Պաշտպանենք իրար՝ մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար, բացառենք մեր նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, գուցե հենց դրանում է թաքնված մեր հանրության կոտրված արժանապատվության վերականգնումը, գուցե հենց մենք պետք է ցույց տանք միավորվելու, իրար պաշտպանելու եւ մեր տեսակը փրկելու կամք ու կարողություն:

Շաբե ԱՎՈՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐՆ ԱՅՆ ՉԷ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԵԿԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ԱՅԼ՝ ԱՅՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԳՆԱԼՈՒ

Այսօրվա Հայաստանում եւ նրա շուրջ կատարվողը ոչ թե սովորական, այլ այս պետության վերջին 30 տարիների, թերեւս, ամենամեծ քննությունն է: Նրանից, թե ինչպես կհանձնի մեր պետությունն այդ քննությունը, կախված կլինի ոչ թե այն, թե ով կլինի այս երկրի հաջորդ վարչապետը, այլ այն, թե մենք, որպես ժողովուրդ, արժանի կլինե՞նք պետություն ունենալու, թե՞ արժանի չենք դրան: Եվ, այս առումով, երկրի այսօրվա իշխանությունը պետք է հասկանա, որ իսկական պետական իմաստնությունն իրենց համար հիմա ոչ թե իշխանությունը կորցնելուց վախենալն է, այլ հանուն պետության իշխանություն կորցնելուց չվախենալը պետք է լինի:

Չնայած Նիկոլ Փաշինյանի նման նաեւ Սամվել Կարապետյանը պետք է ընդունի, որ հիմա, ինչպես Փաշինյանը, ինքը եւս պետք է գործի ոչ թե «մեզնից ով կհաղթի»-ի, այլ «երկիրն ինչ կշահի»-ի տիրույթում: Ավելին՝ Սամվել Կարապետյանից ավելի շատ հենց Նիկոլ Փաշինյանը պետք է հասկանա, որ մեր երկրի այսօրվա խնդիրը ոչ թե այն է, թե իրենցից ով կլինի Հայաստանի հաջորդ վարչապետը, այլ՝ այն, թե աշխարհում եւ տարածաշրջանում ձեւավորված հանգամանքներն իրենցից որ մեկի համար են երկրին ավելի անվտանգ ճանապարհով առաջնորդելու հնարավորություններ ստեղծում:

Այս իմաստով կարեւոր է, որ Նիկոլ Փաշինյանը, որպես ութ տարի բարձրագույն իշխանություն ունեցած մարդ, հասկացած լինի, որ բարձրագույն իշխանություն ունեցող մարդու համար երբեմն լինում է այնպես, որ ավելի կարեւոր է դառնում ոչ թե այն, թե ինքն ինչպես է եկել իշխանության, այլ՝ այն, թե ինքն ինչպես է թողնում իշխանությունը: Այո, երբեմն նաեւ այդպես է ստացվում, որովհետեւ եւ իշխանության գալը, եւ իշխանությունը թողնելը, դրանք ոչ թե պետական գործչի հաղթելու կամ պարտվելու ընդունակություններն են, այլ ներքին ու արտաքին քաղաքական հնագամանքներին վերաբերող իրողություններ:

Այս առումով, Նիկոլ Փաշինյանը պետք է գիտակցի, որ հանգամանքները հիմա այնպես են դասավորվել, որ այսօրվա իր խնդիրները եվրոպականներից ու ռուսաստաններից եկող հիբրիդային պատերազմի դեմ պայքարողներով չեն լուծվի: Չեն լուծվի, որովհետեւ իր այսօրվա խնդիրները ոչ թե հիբրիդային պատերազմի դեմ պայքարող եվրոպական էմիսարների քիչ ներգրավվածությունից, այլ հայ ժողովրդի ու Հայաստանի քաղաքացու՝ իր նկատմամբ ունեցած վստահության պակասից են գալիս:

Եվ քանի որ գալիք ընտրությունների համար Հայաստանի քաղաքացին իր խնդիրը ոչ թե եվրոպական էմիսարների պակաս ներգրավվածությունը, այլ երկիրն այս վիճակից դուրս բերելու ամենաանվտանգ ուղին գտնելն է դարձրել, ուրեմն նա չէր կարող իր համար ամենակարեւոր խնդիրը համարեր Նիկոլին հավատալը եւ այն Սամվել Կարապետյանին կալանքից ազատելը չդարձներ:

Իսկ որ այս ժողովուրդն իր այսօրվա խնդիրը ոչ թե Նիկոլին հավատալը, այլ Սամվել Կարապետյանին կալանքից ազատելն է դարձրել, այ, դրա ապացույցները նիկոլենք պետք է ոչ թե եվրոպական էմիսարների հրաշագործությունների մասին հեքիաթների, ոչ թե պատերազմի մասին Ալիեւի սպառնալիքների, այլ Սամվել Կարապետյանին կալանքից ազատելու համար կազմակերպված միտինգների բազմամարդության մեջ փնտրեն:

Պետք է այդպես վարվեն, որովհետեւ հենց դա է պետականամետ լինելու փիլիսոփայությունը, որովհետեւ հենց դա է պետությունը ճիշտ կառավարելու արվեստը:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 17.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am